

891.542-3

Ley

571

200 9

899

899-
899-
899-

1906


899

ՕՍԻՆ ԵՒ ՄՈՍԻՆ

ՊԵՊԻԿ

(1010
40934)

անձ պատճեն և շահման օօպւութեան օքուզով



1906

սպասարկութեան
Տպարան Գ. Ա. Սահակյանցի.

Տիպոգրաֆія К. Саноянца, въ Александровополь

1899

Ի՞նք սիլելի որդոցը

ՅՈՒՍԻԿԻՆ, ՎԱՀԱԳՆԻՆ ԵՒ ԿԵՍԱՐԻՆ

Дозволено Цензурою. Тифлисъ, 5 Ноября 1898 г.

ՕՐԻՆԱԿ ԽՐԱՏԱԿՑ

ՀԱՅՐԱԿԱՆ ՄԻՐՈՎ,

ՆՈՒԻՐՈՒՄ Ե ՀԱՅՐԸ,

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ.

ԻՄ ԱԺՐԱՏՈՒԱ ՊՐԵՒՔ:

Աշխարհի մէջ առողջ և ապահով կեանք
ունենալու համար՝ մարդիկ պարտաւոր են ծու-
լութիւնից հեռի մնալ և, որքան հնար է, աշխա-
տել որ և իցէ գործով պարապելու։ Մեր նախ-
նիք շատ ճշմարիտ են ասել՝ թէ ծուլութիւնը
մայր է բոլոր չարութեան։

Բնութիւնը իւր գործողութեան մէջ երբէք չի
սխալում. նա շարունակ զոյացնում է զգայա-
կան և անզգայ էտքներ. զգայականին տալիս
է կամք և կարօղութիւն, իսկ անզգաներին ներ-
գործող զօրութիւն։

Զգայականները ծնուած օրից ունին իւրեանց
մէջ ընդարոյս հակումն, հակումից հետեւում է
գաղափար, գաղափարից՝ սովորութիւն, սովորու-
թիւնից՝ ունակութիւն և այս վերջինի մէջ եր-
կար մնալով՝ անընդհատ, մարդիկ ստանում են



苕 569

5/1-2009

բնաւորութիւն, որից դուրս է գալիս զանազան ստորոգութիւն, բարի և չար, լաւ և վատ:

Անհնար է, որ բոլոր ծնուած մարդիկ մի տեսակ բնաւորութիւն ունենալին, ըստորում նրանք առաջ են գալիս զանազան շրջաններից: Թէ ուսումը և կրթութիւնը նորանց գաղափարները բաւականին միացնում է, բայց այնուամենալին անհատից չէ կարող արմատախիլ առնել նորա ընդարձոյս հակումը: Մանաւանդ ծուլութիւնը, որ ամենատեսակ հակման արմատն է, նորանից են դուրս գալիս համարեա շատ մոլութիւններ, մոլութիւնից յառաջանում է չքաւորութիւն, յուսահատութիւն և կարօտութիւն:

Այս գըքոյկի հերոսների մէկն է օրիորդ Կարօտութիւնը, որին Օսին տեսնում է անտառի մէջ մարմնացած երևոյթով: Նա զգւում է նորա գորովներից և ջանք է անում ազատուել, ուստի խաբելով օրիորդ Կարօտութեանը՝ տանում է գերեզմանատուն և կենդանի թաղում: Ասել է թէ սեպական ջանքով հեռանում է ծուլութիւնից, դիմում է աշխատութեան, որով և հասնում է յաջո-

Դութեան:

Հետեւեցէք, զաւակներս, Օսինին, օգտուեցէք գրքոյկիս պարունակած բարոյականից, եղէք աշխատասէր և մեր ազգի ու հասարակութեան համար պիտանի անդամներ, որով իմ հայրական օրհնութեան հետ կը վայելէք աշխարհիս վրայ ընդհանուրի սէրն ու բարեբանութիւնները:

Զեր հայրը:



զ շըմառոք , միջնօթ , այժմիւար ոգեցւամէ
չա գերք , բյամատալուաց նախաւազար ամերգու
զանա՛ մասն ելքաբազուաշ ու դրբա զին և շնառաւ
ամերգա մաքաղաւ նի խոյ , զմանարա մաքաց
բաց խոյ սիշապէս զամբարց ու մէ մասն
ոզգ ձմել ովերատայնաց և մոյ պատմու

ապահան ամա

ՕՍԻՆ ԵՒ ՄՈՍԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

Առաւօտ էր . գեռ արեի նորածին ոսկէփալլ
շառաւիղները հազիւ հազ տարածւում էին ան-
տառի մօտ գտնուած Ծաթեր գիւղի վերայ
Գեղջկական ճաշակով , ցիր ու ցան , գետնափոր
շինուած տների բլրակաւոր տանիքներից ծուխերի
թանձր ծառացած սիւները հետզհետէ բար-
ձրանալով՝ անշշմարելի կերպով ցնդւում էին օդի
մէջ : Գիւղի հովիւները ժողովում էին գառների ,
ոչխարների , հորթերի և կովերի առանձին ա-
ռանձին հօտերը և աջ ու ձախ բաժանելով՝ տա-
նում էին անտառի դալարաւէտ արօտատեղերի
մէջ արածացնելու :

Անտառին աւիլի մօտ , գիւղից բաւականին
հեռի , կար մի առանձին կիսաւեր խրճիթ բոլո-
րովին անխնամ մնացած և ոչ ոք նրա վերալ միտ

չէր դարձնում և յայտնի չէր, թէ այս խրճիթն ինչ ժամանակից էր մնացել և թէ ում էր պատկանում: Բայց արևի առաւտօտեան թարմ արձակած շառաւիղներն այս խրճիթի վերայ տարածուել չինալեցին, ինչպէս և բոլոր արարածների վերայ: Այդ խրճիթից դանդաղ քայլերով դուրս եկաւ վերին աստիճանի գծուծ հագնուած մի առոյգ պատանի, նայեց շուրջը, ճմլեց խանդարուած քնով ճնշուած աչքերը, հառաչեց, հանդարտիկ և դանդաղ դիմեց դէպի արևելք, կարծես զուարձանալով արևի թարմ շողերի վերայ: Գնում էր նա աննըսպատակ, երբէք չէր մտածում բնակած խրճիթի հոգատարութեան մասին: Նա գնում էր անտառի աւելի խիտ ու թաւոտ տեղերը: Ի՞նչ էր մտածում, այդ ոչ ոքի յայտնի չէր, կարծես և իրան էլ յայտնի չէր, երևի բոլորովին աննպատակ էր: Բայց առոյգ և նորատի լինելով ճարպիկ և հուժկու կերպով խիտ ծառերի մեջից արագութեամբ անցնում էր պատանին և կարծես, որքան արևի ճառագալթներն ուժեղանում էին, ինքը ևս զօրանում էր և շարունակում էր դէմը հանդիպած

ծառերի միջով աւելի և աւելի անտառի խորքը գնալ առանց մի որ և իցէ արգելքի:

Արեգակն արդէն շատ էր բարձրացել միայն երիտասարդը չէր զգում, որովհետեւ անտառի խիտ ծառերը և նորանց հովասուն շուքերն արգելում էին նորան որոշել օրուայ որ ժամանակ լինելը: Բարձրացաւ նա մի ծառախիտ բլուրէ վերայ, որից երևում էր հանդէպը թէ արևի թափանցիկ ծառերի շեւզերի միջից ընկած շողերը և թէ անտառի անվերջ շարունակութիւնը:

Յոգնեց, նստեց մեր թափառաշրջիկը, փոթորկից թափուած, չորացած ծառերի կոյտի վերայ, տեսաւ շուրջը պատող անտառը միացած երկնքի հետ: Լուս էր նա, բայց սիրաը, տխուր էր երևում, սկսեց մրմնջել մի բան, չէր հասկանում ինչ էր և ինչ էր ցանկանում: Նստաւ գլուխը կախ, կարծես անշարժ էր, չէր երևում կենդանութեան նշոյլ և զգացմունք:

Շատ չտեեց այս գրութիւնը, երբեմն երբեմըն նա ինքն իրան փսփսում էր.

— Տօ, ես այսքան ժամանակ զուրկ հօրից,

մեր գիւղի ծերունի Մելիք Վիրապի խօսքին, նա
է ասում, թէ տասն և իննը տարեկան եմ: Մելիքն
ազնիւ ծերունի է, երբէք չէ լսուած, որ նա սուտ
խօսի և չարութիւն գործէ: Հօ, սուտ չեմ ասում,
իցէ այս տեսակ ապրելուց աւելի լաւ է մեր ան-
վերջ անտառի մէջ ապրել, ուր որ յարմարին
կըգալինձ, ի՞նչ է իմ գրութիւնը, տուն ասես, տուն
չունիմ, մի աւերակ խրճիթ, որտեղ և բնակւում
են գիւղից փախած շները, այն էլ ոչ գուռն ունի,
ոչ փականք: Ես չեմ կարող հասկանալ, թէ ի՞նչ-
պէս իմ եղբայրը առանց որ և իցէ նեղութիւն
կրելու հարստացաւ, նա ունի տուն, ունի կարո-
ղութիւն, ունի և այն ամեն հարկաւոր անասուն-
ներն և առարկաները, ինչ ոչ ոք մեր գիւղում
չունի, ովք գիտէ ինչ հանգամանքից է առաջ
եկել, այդ իմ խելքը չէ հասնում. հէնց ալդ պատ-
ճառաւ մեր գիւղացիք ինձ ասում են յիմար «գասօ»:
Ախար գասօ բառի նշանակութիւնը յիմար ասել է:
Քիչ էր մնում, որ ես էլ հաւատայի մեր գիւղա-
ցոց ասածներին, բայց չէ որ ես յիմար չեմ, ի՞նչ
մի տարօրինակ գործ եմ արած, որ տեղիք լինէր

մօրից, եղբօրից ապրում եմ իմ մասնաւոր ծա-
ռայութիւնով և գիւղացւոց խնամատարութեամբը:
Թէև հայրս՝ Ափիկը և մայրս՝ Շողիկը միտս չեն
գալիս, վաղուց են նրանք մահացել, բայց եղ-
բայրս՝ Մօսն, որ հիմա կենդանի է, ինձ չէ ճա-
նաչում, որովհետև ես աղքատ եմ իսկ ինքը
հարուստ: Չ'ճանաչելը մի կողմը մնալ, անիրաւը
գիւղի մէջ ինձ որ տեսնում է, ալնպէս է հեռի
հախչում, կարծես թէ մօտից անցկենալիս ալիտի
նորան կպչեմ, կամ մի որեիցէ ողորմութիւն,
կամ օգնութիւն խնդրեմ:

Այսպիսի կեանք վարելուց հազար անգամ ես
գերագոյն եմ գասում հաւատարուել վայրենի ա-
նասունների հետ և նորանց մէջ օրերս անցկա-
ցնել, քան թէ մեր գիւղում, Թորոսենց, Զաքէ-
անց, Եաղուբանց և այլն տների ծառայութիւնը
անելով ապրել և ի՞նչպէս ապրել, ցամաք հացով
կամ մի գուշ թանով: Ոչ, ես այսքան տարի
անցկացը այս գիւղի մէջ և հիմա, ինչպէս ինձ
գիւղացիք ասում են, 19 տարեկան եմ, ալդ, ի-
հարկէ, ինձ յալտնի չէ, միայն ես հաւատում եմ

ինձ լիմար անուանելու։ Մեր գիւղացիք առաջար-
կում են ինձ ձրիապէս ծառայել իրանց, անտառից
փայտ կտրել, հորթերը և գառները, արածեցնել,
ամեն մէկին կարիքս հասածի չափ ծառայել ան-
փարձ։ Այս ամեն ծառայութեանց փոխարէն ի՞նչ
են վճարում—մի կտոր հաց, առ առաւելն մի
զուշ թան։ Ահա նոցա ինձ տուած շորերը, մի հին
վերարկու, որ տասը տարի Մուքէլը հագնելուց
լետոյ ինձ է ընծալել։ Տասը տարի կըլինի, որ
ես շապիկ չեմ հագնում, ոտերիս չարուխները
լաւ էր, որ մի սատկած վարազի կաշուց արեցի,
գլխիս քօլօզը մեր գիւղի հովիւների հնացած
քեչալից շինեցի և համարեա այս ամենը փչացել
են։ Այս, ի՞նչ կըլինէր ես էլ անասունների նման
մարմնիս վերայ խիտ և երկար մազեր ունենալի,
այն ժամանակ չէի կարօտիլ հագուստի։ Որքան
ցանկացայ ծառայ լինել հիմնապէս մի տան մէջ,
չ'յաջողուեց, որովհետեւ մեր գիւղացոց մեծ մասը
իրարու ծառայ են, տնաշէնները հովիւ անդամ
չընդունեցին, հաշուելով թէ ես լիմար եմ և չեմ
կարող կառավարել, ոչ մի ծառայութիւն չգիտեմ։

Թէ նրանց ասածը որքան ճշմարիտ է, չգիտեմ,
միայն կարծում եմ, որ ալդքան էլ լիմար չեմ։
Այս, երանի կըլինէր պարզ երեւէր լիմար եմ թէ
ոչ, երանի ես կարողանալի պարզ տեսնել և ճանա-
չել։ Մի մարդ էլ չկալ, որ ուղիղը հաստատէր
իմ լիմար լինելը, առանց այն էլ՝ մեր գիւղացիք
համոզուած են, որ լիմար եմ և անուանում են
ինձ լիմար Օսին։ Եթէ ես լինէի ուէս, համբայ,
կամ զզիր և կամ մի փոքր կարողութեան տէր,
՚իհարկէ ինձ չէին ալդպէս անուանիլ, բայց ո՞ր
մէկին կարող եմ ցոյց տալ, թէ ես անխելք և
լիմար չեմ։ Բաւական է, որ ես աղքատ եմ և մէկը
միւսին մտիկ տալով համոզուած են, թէ ես լի-
մար եմ։

Օսինը զայրացած սրտով վեր եկաւ բլրից իջաւ
դէպի ծոր ծորը, որտեղ ցիրուցան թափուած քա-
րերի և խիտ ծառերի միջից հօսում էր վճիտ և
կարկաչան մի վտակ։ Նա երբէք անտառի խորքը
չէր գնացել այսչափ հեռու և չէր տեսած այս
փոքրիկ գետակը, որ խոխոջելով գլորւում էր
առանց արգելքի դէպի ցածր իւր ալիքները ա-

փերին խփելով:

Զառի վայրը շատ ուղղահայեաց լինելով,
Օսինը բեզարեց և նստեց մի քարի վերայ: Նա
հանեց պարկից մի կտոր չաց և անտառի
մէջ գտնուած պտուղներից և մի քանի տեսակ
գիւղացոց գործածած կանաչեղէն, որ շըջագայե-
լիս էր հաւաքել:

Օսինն ուտում էր և մտածում:

Կենդանիքը, որ միալն խոտ ուտելով և ջուր՝
խմելով են ապրում, միթէ ես չեմ կարող նրանց
նման ապրել, ահա անտառի մէջ ամեն մի հար-
կաւոր գալարիք և պտուղներ շատ լաւերից է գտնը-
ւում. լաւ է հազար անդամ բնակուեմ այս տեղ,
քան թէ իմ աւերակ խրճիթը: Ալստեղ մի փոքր
երկիւղ պիտի կը մ վայրենի գաղաններից, ոչինչ,
դորա հնարը գտնելը դժուարին բան չէ, հաստա-
տուն հոնի ծառերից ամուր մահակներ կը պատրաս-
տեմ և նորանք զէնքի տեղ կարելի եղածի չափ ինձ
կը ծառալին և նորանցով կ'վախացնեմ. բոլոր վայրի
անասուններին և գաղաններին. գուցէ ժամանա-
կին զէնք ևս կարող կ'լինիմ ճարել. ալդ էլ մի

դժուարին գործ չէ: Կ'խնդրեմ մեր գիւղացիներից
մի կացին, որ իւրեանց համար փայտ կտրեմ. նո-
րանք մէկի փոխարէն երկուսը կ'տան, եթէ ես
լալտնեմ, թէ անտառի մէջն եմ ապրում և շա-
րունակ պիտի պարապեմ վառելափայտ և գերան-
ներ իւրեանց մատակարարելու:

(1610
120934)

ԳԼՈՒԽ Բ.

Պարզ ճաշելուց յետով՝ Օսինը մօտեցաւ առուա-
կին, փորսող պառկեց քարի վերայ և վճիտ բիւրե-
ղեալ ջրից մի կուշտ խմեց: Երբ քարի վերայից
բարձրանում էր՝ լանկարծ ծառերի շիւղերի միջից
աչքին ընկաւ մի դեռափթիթ գեղեցկուհի օրիորդ,
որը ուղղակի գալիս էր իւր մօտ:

Օսինն առաջին անգամն էր տեսնում այդպիսի
չքնաղ և նազելի արարած: Նա կարծեց թէ եկող
գեղեցկուհին մի օրիորդ իշխանուհի էր, որ գա-
լիս էր ջուր խմելու, բայց օրիորդը առուակը
թողած դիմեց գէպի Օսինը:

Իմ սիրելի Օսին, սկսեց դիցուհին, քո տեսու-



54-2009

Թեան կարօտ մնալով՝ սիրտս բոլորովին հալ ու
մաշ ճնշում էր, որքան ուրախ եմ, որ այսօր
բաղդ ունեցայ քեզ հանդիպելու և առանձնացած
միայնակ նոյն իսկ անտառի մէջ։ Իմ հոգոյս հա-
տոր, իմ սիրելի անձս, իմ մտքիս առարկան, խընդ-
րում եմ, ասա՛, արդեօք դու սիրում ես ինձ։

Օսինը շուարել էր այս նորանշան սիրավառ-
քնքուշ օրիորդին ապշած նայելով։ Նա տրտմում
էր, որ օրիորդը կամաց կամաց առաջ էր գալիս,
իսկ իւր ոտերը անյատաքար յետ յետ էր ընկրկում,
համարեա աննկատելի կերպիւ ինքը հեռանում
էր աղջկանից։ Վերջապէս Օսինը վստահացաւ,
սիրտ արեց և հարցըց։

— Աղջիկ, դու ով ես, դու ուր, այստեղ ուր։

— Ես քո կարօտկէզ սիրուհիդ եմ։

— Դու իմ սիրուհիս ես։

— Այն, այն, ես, մի թէ դու ինձ չես ճանաչում,
հոգեակս՝ Օսին։ չէ՞ որ ես անընդհատ գիշեր ցերեկ
քեզ հետ եմ և քեզանից չեմ բաժանում։ Համ-
բուրիր ինձ, իմ սիրելի Օսին, գրկիր, միացիր ինձ,
բաւական է, հոգիս ալրում է քո սիրուդ մէջ, այլ

և չեմ կարող համբերել…

Օսին խելագարուածի պէս զարմացած մտիկ
էր տալիս հրաշագեղ աղջկայ պատկերին և թան-
կագին փայլուն հանդերձին և չէր համարձակում
մօտենալ։

Վերջապէս, նա փոքր ինչ հեռանալով աղջ-
կանից՝ նստում է առուակի ափում գտնուած մի
քարի վերայ և սկսում է մտաբերել, թէ արդեօք
ինքը երազումն է, թէ ոչ, հապա հաստատ
իրականութիւնն է արդեօք և չիցէ թէ հիւրի և
փերիներն են ալսպիսիքը։ Եւ աղջիկը նկատելով
նորան, մօտ է գնում և ուղղակի նստում է Օսինի
հանդէպը և աչքերը սւեռած նորա երեսին՝ ան-
ընդհատ նայում է նորան։

— Զէ, չէ, սուտ է, իր կեանքումն էսպէս հրեշ-
տակ կամ սատանայ նա տեսած չէ։

— Եհ, ինչ կըլինի թող լինի, վճռեց Օսինը և
հարց տուեց։

— Զասես, օրիորդ, անունդ ինչ է։

— Սիրելի՞դ իմ Օսին, չէ որ ասացի քեզ, թէ ես
քո կարօտալի տարփուհիդ եմ։

— Ես տարփուհի մարփուհի չ'գիտեմ:
 — Առ այժմ այդ թող մնայ մի կողմը, դու ինձ
 էս ասա՞
 — Անունդ Բնչ է, քեզ Բնչ են ասում:
 — Օսին, դու կատակ ես անում, թէ սէրս ոտ-
 նակոլս անելով՝ արհամարհում ես ինձ:
 — Դու ես գիտես, որ ես մի գուեհիկ գիւղացի ան-
 տէր տղայ եմ, քեզ չեմ տեսած ոչ մի տեղ, և քեզ
 հետ երբէք ծանօթութիւն և բարեկամութիւն չեմ
 արած, հիմի քո միտքդ Բնչ է. ուր ես եկել, ես
 ով, դու ով, գոնէ ասես՝ անունդ Բնչ է:
 — Յաւում եմ՝ ի բոլոր սրտէ, իմ անգին սիրելիս,
 որ ես միշտ քեզ հետ եմ եղել և դու, ինչպէս
 երևում է, քարասրտացել ես, ուզում ես ինձ մո-
 ռանալ:

— Գլխացաւանք մի տալ, թէ հետեւանքից չես
 վախում, ասա՞ ով ես, Բնչ ես և Բնչ է անունդ:

— Անունս ասացի քեզ սիրելի Օսին, բայց դու
 կարողացար ըմբռնել: Երեկ ձեր գիւղացիք քեզ
 որ յիմար են ասում, տեղիք ունեն: Իմ անունը
 «Կարօտութիւն է», քեզ չափազանց սիրելուս

և կարօտ մնալուս համար անունս Կարօտութիւն
 է նմնացել, այս անունով էլ ամենալն տեղ ինձ
 կոչում են: Յոյս ունեմ, որ հիմա կարողացայ քեզ
 իմ անունը հասկացնել, այնպէս չէ:
 — Ե՛հ, հիմա հասկացայ որ դու խաբեբայ, գայ-
 թակղեցնող աղջիկ ես, աշխարհի մէջ Կարօ-
 տութիւն անուն չկայ՝ ոչ մարդու և ոչ կնոջ:
 — Հէնց այդ է, սիրելիս, որ դու ոչինչ չգիտես.
 աշխարհի սկզբից մինչև այսօր իմ անունը կալ և
 կըմնայ յաւիտեան միայն դու տիմարի մէկն ես
 և իմ մասին չես կարող լաւ գաղափար կազմել
 ու հասկանալ:

Օսինը շրմունքն ուռցրեց, նա աւելի յիմա-
 րացաւ և ուսերը վեր քաշելով ասաց.

— Կարելի է, ես չեմ հակառակում, բայց որ
 այդպիսի անուն չեմ լսած՝ միթէ մեղաւոր եմ:

— Մեղաւոր չես, հոգեակս, ոչ, ոչ երբէք, ընդ-
 հակառակը դու իմ անգին սիրելիս ես, իմ հոգոյն
 հատորն ես:

— Որ այդպէս է, ասա խնդրեմ, դու ինձ որ-
 տեղ ես տեսել և երբ:

— ԶԵ որ, իմ սիրասուն հոգիս, ասացի որ ամենայն օր միշտ քեզ հետ եմ և դու ինձ չես նկատում։
— Դու իմ հօրս ճանաչում ես։
— Ինչպէս չեմ ճանաչում, շատ լաւ եմ ճանաչում, ծերունի Ափիկին և մօրդ Շուշիկին, որոնց անչափ յարգել և պատուել եմ շարունակ։
— Թէ որ էդպէս է, եղբայրս ով է.
— Ափելի Մօսօն... ես նորան ատում եմ։
Ասաց աղջիկը և սրտափշրուկ հեկեկալով ընկաւ Օսինի գիրկը։

ԳԼՈՒԽ Գ.

Թէ ինչքան ժամանակ անցկացաւ ոչ Օսինն և ոչ աղջիկը չիմացան, աղջիկը միանգամայն արձանի նման նշոյլ չէր ցոյց տալիս կենդանութեան, իսկ Օսինն երբեմնապէս ուշքի էր գալիս և ուսերը վեր քաշելով մտախոր զարմանում տարօրինակ երեսոյթի մասին։

— Ի՞նչ է ալս, ով Աստուած, ես սորան չեմ ճանաչում և չեմ տեսած, իսկ սա իմ ամենամտերիմն

է ձեւանում, և որ գլխաւորն է, ճանաչում է յականէ անուանէ իմ բոլոր արիւնակիցներիս, իմ հօրս, մօրս, որ երբէք ես չեմ մտաբերում, ըստորոշ 19 տարեկան եմ։ Հայրս մահացել է, երբ ես եղել եմ երկու տարեկան. իսկ մայրս հօրիցս չորս ամիս յետոյ։ Այդ ընչեցն է, որ նորանք իմ միտը չեն գալիս, իսկ սա ասում է՝ ես նրանց յարգում և պատռում էի։ Ի՞նչ թէ ես, եղբայրս Մօսօն, որ ինձանից մեծ է, նա էլ լաւ չէ լիշում մեր ծնողներին։ Ախար սա ինչպէս պիտի նորանց ճանաչէ, քանի որ սորա հասակը և դէմքի գծագրութիւնը ինձ ցոյց են տալիս առառաւելն տասն և վեց տարեկան։ Այստեղ մի հանելուկ կայ, բայց սպասենք, տեսնենք վերջն էլ ինչ պէտք է լինի և ինչ է սորա դիտաւորութիւնը, որ այսքան ինձ սիրում է։

— Ասա խնդրեմ, կրծքին սխմեց, ուշքի բերեց աղջկանը և հարցրեց Օսինը, դու որտեղացի ես, գիւղացի ես, թէ քաղաքացի։

— Իմ անգին սիրեկանո, ասաց օրիորդը կիսանւաղ, ես ոչ գիւղացի եմ և ոչ քաղաքացի։

— Ապա ո՞րտեղացի ես
 — Ամենայն տեղացի:
 — Քո տունը ո՞րտեղ է:
 — Ես սեպհական տուն չունիմ, իմ տունը իմ
 սիրեկանների գիրկն է:
 — Նատ են սիրեկաններդ:
 — Նատ, շատ. ես ամեն մարդու մօտ շուտ
 շուտ այցելութիւն եմ անում, նորանց մէջ քեզ
 չափազանց եմ սիրում և ցանկանում եմ քեզ
 հետ մնալ և ապրել անընդհատ:
 — Որ էդպէս է, ինձանից հեռու կաց. ես
 ոչ տուն ունիմ, ոչ սեպհական բնակարան, ոչ
 կալք, ոչ կարասիք և ոչ անկողին, բնակում եմ
 մի կիսաւեր խրճիթի մէջ: Նատ անգամ ինձ հետ
 ընկերանում են գիւղից զզուած և հեռացած
 շները, որոնք իւրեանց օրական պարէնը, սնուն-
 դը ճարելուց յետոյ՝ գալիս են ինձ մօտ հան-
 գստանալու, որովհետեւ իմ խրճիթի գուռը միշտ
 բաց է թէ ցերեկը և թէ գիշերը, գնա ուրեմն՝
 ուր որ աւելի յարմարութիւն կըդտնես, ես քեզ
 որտեղ պիտի տեղաւորցնեմ. նամանաւանդ, որ

ես լաւ եմ համարում բնակել այս անտառի մէջ,
 քան թէ մարդկանց, կամ մեր գիւղացոց ընկե-
 րութեան մէջ:
 — Աւելի լաւ, ասաց օրիորդը, այդ իմ իսկ
 ցանկութիւնն է որ դու անտառի մէջ ապրես,
 ըստորում միշտ ինձ հետ կըլինիս:
 — Դու այստեղ ինչ պիտի անես, ոչ հաց
 ունիս, որ ուտես, ոչ կարող ես բնակել ինձ հետ:
 — Այդ է, սիրելի Օսին, որ ինձ չես հասկանում,
 ախար ես որտեղ կունենամ հաց, որ չեմ աշ-
 խատում, ոչ մանում եմ և ոչ գործում, միշտ
 դատարկ և անգործ ման եմ գալիս լեռներից
 լեռներ, անտառից անտառ պարապ սարապ:
 — Հապա այդ շքեղ և թանկագին հագուստը
 քեզ ով է տուել կերևի քո անթիւ սիրեկանները:
 — Այս հանգերձները ես ճարել եմ անտառի
 այն խոր տեղերից, ուր մարդկանց ոտքը երբէք,
 չէ գիպել, այնտեղի բուսած ծառերի տերեներից
 և այս ծաղիկները, որ տեսնում ես, նոյն դա-
 լարավալից հաւաքելով զարդարել եմ ինձ:
 — Ապա հաց ո՞րետղից եռ ուտում:

— Ինձ ով է տալիս հաց, դու չհասկացմբ որ
իմ անունը կարօտութիւն է, ես կարօտ եմ ոչ
միայն հացի, այլ ամեն մի չնչին առարկալի, որն
անգամ քեզ համար նշանակութիւն չունի:

— Ուրեմն հեռու ինձանից, դու ինձ հետ զուր
կըդաս իմ աւերակ խրճիթը, ես ոչ հաց ունիմ,
ոչ ջուր և ոչ մի պատսպարան:

— Հոգիս, ինձ ալդ բոլորը յալտնի է, ասաց
օրիորդը, ես միայն քո սիրոյդ եմ կարօտ, քո
դէմքը ինձ լիուլի սնունդ է տալիս և կշտացնում է
ինձ առանց մի որևիցէ բան ուտելու և խմելու:
Սյս լաւ բան է, ինքնին ասաց Օսինը, ես քաղ-
ցած մեռնում եմ և ցանկանում եմ խոտաճարակ ա-
նասնոցնման ապրել ալս անտառում, իսկ սորա հա-
մար իմ դէմքը կաթի սերից աւելի համեղ է երեա-
ցել, որ մտիկ տալով սնանի և կշտանալ. ապրիս
Օսին, ինչ երջանիկ մարդ ես եղել, դու քաղցած
մեռիր, ուրիշները քո մըրոտած դէմքին մտիկ տա-
լով կշտանան: Ո՛չ, սորա ասածը ճշմարիտ չէ,
սպասեմ, վերջը տեսնեմ ինչ է սա ցանկանում
և ինչ է ինձնից պահանջում... Օսինը յանկարծ

վեր ժուաւ գնաց:

— Տեսնենք հետեւում է ինձ, մտածեց նա:
Իսկոյն տեղից բարձրացաւ օրիորդ Կարօտութիւնը
և հետեւց նորան:

Օսինը գնում էր և ծառերի լեռներից երբեմն
նայում էր յետ, որ տեսնի թէ գալիս է աղջիկը.
Նա թէև մերժեց, կոպիտ վարուեց, բայց սիրտը
քիչ քիչ սկսել էր վառուել դէպի անծանօթը,
որ քայլերն ուղղում էր դէպի առաջ:

ՊԱԼՈՒԽ Դ.

Սիրելի Օսին, ետեից կանչեց Կարօտութիւնը,
չես ցանկանում գոնէ իմ դէպի քեզ ունեցածս
այսքան սիրոյ փոխարէն թւեդ ինձ տալ ընկե-
րութեամբ գնալու, որով սիրած սիրտս երջանկա-
ցնելու:

— Լաւ է, կոպտաբար նկատեց Օսինն իւր մէջ,
ես քաղցած, հազիւ կարողանում եմ զառի վերը
բարձրանալ իսկ սա ցանկանում է իմ ուսիս նստել,
չէ, այդ իմ բանը չէ:

Ի՞նչ, դու իմ թեսն ես ուզում, ապա ես մնամ
մի թեանի, ես այս իմ թեերով աշխատել, գոր-
ծել եմ ցանկանում, մի թեով ինչ կարող եմ անել.
ոչ, քաւ լիցի. ինչ ուզում ես ասա, բայց թես-
մի խնդրիր, ըստորում անկարելի այդ. թեքս
ինձ շատ են հարկանոր:

— Ես քո թեը ուսիցդ կտրել չեմ ուզում, գի-
տեմ որ միս և արիւնից է և ոչ թէ իմ թես նման
բնութիւնից գուրս մի գոյացութիւն է. թողմնալ
քո թեը ուսիդ վերայ, ինչպէս որ կալ, ես ա-
ռաջարկում եմ թեիդ կրթնելով գնալ քեզ հետ
հաւասար. մանաւանդ որ ես շատ թեթև եմ,
քեզ չեմ յոգնցնիլ: Միթէ դու չգիտես, որ քո
յաղթանդամ ուժեղ թեը իմ գլխու հետ չեմ փո-
խիլ՝ քաւ լիցի այդ, ես միայն իմ ջերմեռանդ դէպի
քեզ ունեցած սիրոյս մասին ցանկանում եմ քեզ
հետ փաթաթուած գնալ. ո՛քան հաճելի է ինձ
այդ ձեռվ քեզ հետ գնալ.

— Այս ի՞նչ երջանիկ մարդ եմ եղել ես, ինք-
նաբաւական և ինքնուրոյն փնթփնթալով ասաց
Օսինը. թագուհոյ հաւասար օրիորդը ցանկանում

է ուսիս նստել և իմ թեսի փոխարէն տալիս է
իւր գլուխը, իսկ ես հրաժարում եմ այդ
պատուից: Ի՞նչ արած, այնպէս քաղցած եմ, որ
հազիւ ինքս կարող եմ այս բարձրավանդակից
վեր ելնել, ուր մնաց շալակել և մի այլ անձ-
նաւորութիւն: Զէ, սիրուն աղջիկ, կամ ինչպէս
դու ասում ես՝ օրիորդ Կարօտսւթիւն, ճշմարիտը
խոստովանած՝ ես այդպիսի սովորութիւն չունիմ,
ես գնում եմ իմ ոտքերով, դու էլ գնա քո
ոտքերով, ի՞նչն է ստիպում մեզ միմիանց հետ
փաթաթուած գնալ, իցէ որ այս դարերի և
խոռոշների մէջ ոտքերնիս սալթաքուի տապալինք
և մի վնասի հանդիպինք: Օրիորդ կարօտութիւնը
զայրացաւ Օսինի արհամարհանքի և կոպտութեան
վերայ. նա լուց և հետեւում էր Օսինին:

ԳԼՈՒԽ Ե.

Երբ Օսինն և օրիորդ Կարօտութիւնը բար-
ձրացան գարի գլուխը, Օսինն սկսեց սովորական
գործածած կանաչիքը հաւաքել ուտելու համար:

Նորան հետեւում էր և աղջիկը, երբ օրիորդը
ներկայացրեց իւր հաւաքած դալարիքը, Օսինը
զարմացաւ և ասաց.

—Աղջիկ, այդ անպիտան կանաչիքն ինչու-
ես հաւաքել:

—Սիրելիս, քեզ համար եմ հաւաքում, այս
շատ պատուական և շատ համեղ ուտելիք է:

—Ինչպէս համեղ կարող է լինել, այդ օշինդը
է (եաւշան), այդ կանաչին չեն ուտում:

Ո՛չ, ոչ հոգիս, ասաց Կարօտութիւնը. սո-
րանք են իսկ օգտակար և անդարար կանաչիքը,
քո հաւաքածներն աւանակներն են ուտում, ոչ
թէ մարդիկ:

—Ի՞նչ ես ասում էյ, օշինդը ուղտերն են
ուտում և ոչ մարդիկ: Մարդիկ ուտում են
օշինդը, ասաց աղջիկը, որ նորանցից բուրէ
անուշահոտութիւն, նորանց չմօտենալ ոչ մի զե-
ռունք: Օսինը լոեց և մտածում էր, թէ այս
ինչ արարած պիտի լինի: Հըէշ է արդեօք թէ
զգայուն մարդ: Դէմքը քնքոյշ է, իսկ երբ ձեռս
դիպչում է նորա մարմնին, զգում եմ, որպէս

թէ մի ծառի ճիւղի է դիպչում. զինի արդեօք
սա այն արարածներից լինի, որոնց մասին մեր
գիւղացիք պատմում էին թէ մեր լեռներում և
մեր անտառում երևացել են երբեմն դիցուհիք:

—Ե՞հ, թող, մտածեց պատանին, ինչ ուզում
է թող լինի, ինձ համար միւնոյն է. կամենալ
հըէշ զառնալ, կամենալ մարդ, ես իմը գիտեմ,
թէ ինչ խաղ պիտի խաղամ որա գլխին, դեռ
վերջը տեսնենք:

Պալոիլա Զ.

Արդէն երեկոյեան արեգակի վերջի թոյլ
շառաւիզները անտառի մէջ գտնուած ամե-
նաբարձր ծառերի ծայրերից անհետանալու վերալ
էին, երբ Օսինը հազիւ նոր իւրեանց գիւղի
ճանապարհը հասաւ. նորան քայլ առ քայլ հե-
տեւում էր և օրիորդ Կարօտութիւնը:

Վերջնալոյսը բաւականին գեռ լոյս էր տալիս
Ծաթեր գիւղին, երբ Օսինը օրիորդ Կարօտութեան
հետ մտաւ միասին իւր կիսաւեր խըճիթը:

Օսինի ծանօթ ընկեր շները վեր կացան
ընդունելու նորեկներին:

Օսինը նորանց վերայ ուշ չգարձրեց, իսկոյն
դիմեց իւր խրճիթի ներքին անկիւնը և տախտակ-
ների տակից հանեց մի կոտրած բրիչ և պատ-
րաստում էր խրճիթից դուրս գոլ:

Երբ գնաց դէպի դուրսը օրիորդը հարցրեց.

—Ուր ես գնում, սիրելիս, չէ որ այս է քո
ընակարանը, որը ինձ լաւ լայտնի է:

Դու մի փոքր սպասիր այստեղ, ասաց տղան,
ես շատ շուտով կը վերադառնամ.—անհոգ կաց, հի-
մա իսկոյն կը գամ, ասաց Օսինը և դուրս ելաւ, ուղ-
ղակի գնաց դէպի գիւղ, մտաւ Աօլոենց դարմանա-
նոցն և այնտեղից վեր առաւ մի մեծ թիւ շտապեց
դէպի գերեզմանատուն։ Այնտեղ նա փորեց բաւա-
կանին լայն և խոր մի մեծ փոս։ Գործը վերջացրեց
փոսի մէջ նա և թողնելով բրիչը և թին, դուրս
եկաւ փոսիցև արագ քայլերով եկաւ դարձեալ մտաւ
խրճիթը, ուր իրան սպասում էր Կարօտութիւնը
անհամբեր։

Ուր գնացիր, սիրելի, հարցրեց նորան աղ-

ջիկը և ինչ գործ էր, որ այդպէտ աճապարանօք
կատարեցիր։

—Գնացի գերեզմանատուն, գործ ունէի։

—Գերեզմանատուն, ինչո՞ւ համար այսպիսի
տարաժամ։

—Գիտես, Կարօտութիւն, ես կեանքիս մէջ
սուտ խօսել չեմ սիրած և չեմ ցանկանում քեզ
խաբել. ահա ուղիղ խօսովանում եմ. ես գնացի
գերեզմանատուն, այնտեղ փորեցի մի խոր և
լայն փոս և հիմա եկայ որ այս տախտակները
տանեմ այնտեղ մի դագաղ շինեմ, մտնեմ դա-
գաղի մէջ և լաւիտեանս դուրս չգամ դագաղից,
որպէս իմ շիրմից։ Այս է իմ վճիռը և այս էր
աճապարանօք արածս դործը։

—Ո՛հ քաւ լիցի քեզ, մի աներ այդպէս,
ասաց օրիորդը. չէ որ ես այն ժամանակ ըսոլորովին
անմխիթար կը մնամ, չէ որ քեզ ինձ սիրեկան
չունենալով այս աշխարհի մէջ քո սիրամաշ սիրով
հալ ու մաշ կը զնչանամ։ Կաղաչեմ հոգիս, թող
այդ մտածմունքը, եկ ինձ մօտ և այս փափուկ
հողի վերայ նստենք և զուարձատանանք միմիանց

Նայելով:

— Օրին՛րդ, ես արդէն վճռել եմ, օրհասս
մօտ է, ես այս մասին ձեզ առաջ չյայտնեցի
նորա համար, որ գիտէի դու ինձ շատ ես սիրում,
ինձանից լետոյ անմխիթար ապրելով և շատ սը-
դալով իմ վերայ դու ևս կըմեռնես, ուղիղ պէտքէ
ես քեզ խոստովանեմ, որքան դու ինձ ես սիրում
կրկնապատիկը ես քեզ եմ սիրում, բայց ինչ ա-
րած, որ ձեռս մի ճար չունիմ, իմ վճիռը՝ վճիռ
է և անհնարին է անկատար թողնել։ Այս ասելով՝
Օսինը մօտեցաւ խրձիթի խաւար անկիւնին, պատռ-
հանից վեր առաւ և գրպանը լքցրեց շատ բեռներ,
ապա վերցրեց այն տախտակները, որոնք իւրեան
ծառայում էին անկողնի փոխարէն և պատրաստ-
ւում էր դուրս գնալ խրձիթից։

— Օսին, սիրելի Օսին, ասաց օրիորդ Կարօ-
տութիւնը. քեզ ասացի առաջ, որ քեզ անչափ
սիրում եմ և միշտ քեզ հետ եմ եղել, բայց դու¹
ինձ չեւր նկատում։ Ներկայումս ես քեզ պարզ
երեացի այն պատճառով, որ ինչպէս յայտնեցի
չափազանց սիրում եմ, ուրեմն եթէ դու վճռել

ես անշուշտ մեռնել, ես ևս կըդամ քեզ հետ և քեզ
հետ կըմեռնեմ։ Վեր առ և ինձ համար դագաղացու
տախտակներ և գնանք միատեղ գերեզմանատուն,
այն քո պատրաստած փոսի միջին երկուքս դա-
գաղներիս մէջ մտնենք և մահանանք։

— Ո՞չ, սիրելի օրին՛րդ, ես չեմ ցանկանում
որ դու մեռնես, և չեմ կարող համբերել քեզ
մեռած տեսնելով. դու կաց այս իմ խրձիթի մէջ,
գուցէ մի ալլ ինձանից լաւ սիրահար դտնես և
նորանով մխիթարուիս։

— Երբէք, Օսին, քեզ միայնակ չեմ թողնելու,
ալդ անկարելի է, քո վճիռն ինձ համար ևս վճիռ
է, գնանք։

ԳԱԼՈՒԽԻՄ Է։

Գիշերային խաւարը իւր թանձր սև վարա-
գուրով արդէն ծածկել էր երկրի երեսը։ Ծե-
րացեալ լուսինը շատ աղօտ և նուազ լոյս էր տա-
րածում Ծաթեր գիւղի վերայ։ Լուռ և մունջ
խաղողութիւն էր թագաւորում բոլոր արա-

րածների վերայ. միայն երբեմն երբեմն լոռութիւնը խանգարում էին վայաձայն բուերի անտառից լսող խռպիտ և նուազ ձայները, կարծես խաւարալին հրեշտակների հետ էին բարեռում նորանք:

Երբ Օսինը բեռնաւորուած դագաղացու տախտակներով օրիորդ Կարօտութեան հետ միասին հասան գերեզմանատան մէջ պատրաստուած փոսի եզերքին, Օսինը դագաղացու տախտակները իջեցրեց փոսի մէջ և այնտեղ կազմեց, հաստատուն դամեց մի դագաղ իր կափարիչով՝ սկսեց նոյնպէս միւսը արագութեամբ պատրաստել և վերջացնել:

—Ազնիւ սիրուհիս, ասաց Օսինը, ահա դագաղները պատրաստ են: Օրիորդ Կարօտութիւնը իսկոյն թռաւ և իջաւ փոսի մէջ և ասաց. ահա ես ևս պատրաստ եմ:

—Ո՛ սիրուհիս, ասաց Օսինը, սիրոս արեան մէջ լողում է, չեմ ուզում քեզ դագաղ մտած տեսնել, խնդրեմ դու դուրս գաս գերեզմանից և գնաս ուր որ ուզում ես. թող ինձ այստեղ միայն մնալ և մեռնել, Բաւական է վերջին թշուառութեանս և աղքատութեանս մէջ կարօտութեամբ

ճնշուելս. քեզ ինչ հարկն է ստիպում, որ դու ևս ինձ հետ մեռնես, գնա՞ խնդրեմ, գնա՞ սիրուհիս:...

Ո՛չ, այդ անկարելի է, ասաց օրիորդ Կարօտութիւնը. ահա ես մտնում եմ դագաղի մէջ, առաջ ինձ իմ դագաղի մէջ գամիր, յետոյ դու մտիր քո դագաղը, որ իմ աչքերը չտեսնեն իմ սիրելոյն դագաղի մէջ:

Այս ասելով՝ օրիորդ Կարօտութիւնը մտաւ իւր դագաղի մէջ և պառկեց:

Օսինը վեր առաւ կափարիչը գրեց օրիորդի պառկած դագաղի վերայ:

—Մնաս բարեաւ, սիրելիս, ասաց Օսինը և կափարիչը դագաղի վերայ հաստատուն գամելով գամեց:

Խոկ իւր համար պատրաստած դագաղի վերայ ձգեց բարձրից կափարիչը ձեւացնելով, որպէս թէ ինքն ևս մտաւ նորա մէջ և իբրև դագաղի միջից ասաց.

Սիրուհիս, եթէ միւս անգամ դուրս գաս և ներկայանաս ինձ, այն ժամանակ քեզ կ'այրեմ և

փոշիտ քամուն կըտամ այնպէս, որ յաւիտեան
քո հոտը չմնայ աշխարհիս մէջ։ Ահա նախապէս
լայտնեցի քեզ իմ վճիռը, որ զգուշանաս։
Ասաց Օսինը և կամացուկ դուրս թռաւ փափից
ու արագութեամբ հողը լցրեց աղջկալ գագաղի
վերայ և շուտոք մի տախտակ նշան գրեց ու հե-
ռացաւ գերեզմանից։

ԳԼՈՒԽ Բ.

Երբ առաւօտեան լուսոյ արծաթափալ շառա-
ւիզները աղօթարտնից կամաց կամաց լետ էին քաշ-
ում, Արուսեակն սկսեց փախուստ տալ ցերեկեան
թագաւորի ոսկէփալլ շողերից։ Ահա այդ ժամանակ
Օսինը լոգնած հասաւ աղբիւրի մօտ, սկսեց լուաց-
ուել և մի փոքր ջուր խմելով զովանալ։

Մի տուանձին անսահման ուրախութիւն էր
տիրել նորան, որ կարողացել էր ազատուել այն
իրան ձանձրալի ուրուական սատանի երեսից,
որից շատ ծանր ազդեցութիւն էր զգում։ Օսինը
աղբիւրի մօտ լանկարծ տեսաւ ընկած մի մեծ

կաշեալ քսակ, բերանը հաստատուն կապուած։
Նա վեր առաւ քսակը, շօշափեց, բայց ոչինչ
չկարողացաւ հասկանալ, թէ մէջը ինչ էր պարու-
նակում. միայն զգում էր, որ քսակը համեմատած
նոյն ձեռչափի քարի հետ գարձեալ հինգ անգամ
աւելի ծանր կըլինէր։ Զարմացաւ տղան, թէ ար-
դեօք բնչ կարող էր լինել նորա մէջ պարունակ-
ուած։ Այս և այն կողմերը գարձրեց, ոչինչ բան
չնկատեց միայն մի քանի խազեր կալին նորա
վերայ՝ իւր համար անհասկանալի։ Հազիւ գըժ-
ուարութեամբ կարողացաւ քսակը ծոցումը տե-
ղաւորել։ Նա փոքր ինչ ջուր խմեց և գնաց իւր
խրճիթը։

Արդէն արեւը բաւականին բարձրացել էր, երբ
Օսինը մտաւ իւր խրճիթը։ Այս անգամ նա հա-
կառակ սովորականին, դուռը կամեցաւ ծածկել,
բայց փականք չունենալու համար՝ մի մեծ քար
դռան լետեկի կողմից դէմ գրեց և ինքը քաշուեց
խրճիթի խորը, նստեց, քսակի կապոցը քակեց,
և ինչ տեսաւ. ամբողջ քսակը լիքն էր ոսկով։
— Արդէօք ումը կարող են լինել այս ոսկինքը,

մտածեց Օսինը, մեր գիւղացոց մէջ չկայ այնպիսի մարդ, որ կարողանալունենալ այսքան ոսկի, մանաւանդ այսպիսի նոր և միաժեսակ ոսկի, որ երբէք տեսած չեմ: Այս խազերը, լիշեց և բացականչեց նա, ես տեսել եմ վարձով տարած բեռների վերալ: Երևի քարաւանը գնալիս՝ վաճառականը կամենալով աղբիւրից ջուր խմել, քսակը վայր է ձգել:

Նա այլ ևս չվարանեցաւ երկար մտածել, վըճռեց որ այս գանձը իւր խրճիթի մօտ խոր, մութանկիւնը փորի և թաղէ: Սակայն նա քսակի միջից վեր առաւ երեք ոսկի, մի հնոտի կտորի մէջ փաթաթեց և ծոցագրապանը դրեց, ասելով: Տասն օր կըսպասեմ, եթէ տասն աւուր մէջ այս քսակի տէրն յայտնուի և կապացուցանէ որ իւրն են ոսկիքը, որոնցից նշաններն արդէն մօտս ունեմ, և կասէ թէ ինչ քանակութեամբ էին, այն ժամանակ ամբողջ քսակը կըյանձնեմ տիրոջը: Իսկ եթէ տասն օրից յետոյ մի տեղեկութիւն ու հարց ու փորձ չլսեցի, այն ժամանակ ճշմարիտ եմ ասում, որ Աստուած է ինձ ուղարկել դտածս ոս-

կիները՝ ինչպէս արժանի սեփականութիւն: Այսպէս վճռելուց յետոյ՝ Օսինը գուրծ եկաւ խրճիթից միայն այն պարմանով, որ ոչ ոքին չեմացնէ այս իւրեան պատահած գէպքը: Դնաց նա գիւղը, մտաւ Սուգոյենց տունը նոյն անասնոց սովորական խնամքը անելու: Սուգօն տեսնելով Օսինին հարցրեց:

— Ուր էիր երեկ, չերևցար գիւղի մէջ, ըինք գնացել էիր անտառը փայտ կտրելու:

— Ելո՛, անտառումն էի, բայց փայտ չէի կըտրում, պարապ ման էի դալիս, ցանկանում էի անտառի ծալը տեսնել և նորա մէջ չտեսած տեղերի հետ ծանօթանալ: Բայց չկարողացալ, որովհետեւ որքան խորը գնացի, այնքան աւելի խիտ-խիտ ծառեր և խոր ծործորներ ու ժայռոտ քարափներ տեսայ: Վերջը վայրենի գազաններից երկիւղ տանելով՝ կըկին վերադարձու գիւղ, միայն շատ ուշ:

— Ե՞հ, Օսին, միթէ մեր անտառը ծալը ունի, նորա շարունակութիւնը միանում է Կովկասեան լերանց մէջ գտնուած անտառների հետ: Պյու ինչ

Քո գլխի գործն է, ասաց Սուգօն:

—Ես էլ բան չեմ ասում այդ մասին, միայն
այն էր որ պարապ մնալուց շատ ձանձրացայ.
այդպէս մտքիցս անցաւ, այդպէս էլ կատարեցի:

Օսինը մի փոքր լուռ մնալուց յետոյ՝ ասաց.

—Սուգօ, հայրիկ, ես մինչև երբ մնամ ալս-
պէս անգործ, մեր գիւղացոց անասուններին խը-
նամելով, որ նորանք ևս իրանց կողմից իմ աշխա-
տութեանը համար ձեռքերից եկած ողորմութիւ-
նով ինձ մի կտոր ուտելիք տան: Միթէ ես ևս
այս գիւղի մէջ չեմ ծնուած, և ինձ մի կտոր
հողի բաժին չի պատկանում, որ ես էլ երկրա-
գործութեա՞լ պարապեմ և գիւղացոց շարքի
մէջ մտնեմ:

—Որդի, ասաց Սուգօն, քո հայրդ Ափիկը
նա էլ քեզ նման կեանք էր վարում այս գիւղի
մէջ, ոչ հողի մասն ունէր և ոչ տնտեսութիւն,
նա երբէք չէր մտածում ոչ երկրագործութեան
և ոչ հողի մասին, միայն մեր գիւղացոց ծառա-
յելով էր ապրում: Իսկ եղբայր՝ Մօսօն, ինչպէս
մեզ յայտնի էր, ոչինչ չունենալուց յետոյ՝ անբա-

րեսիրտ և խարդախ էր: Խարեւայ ճարպիկութեամբ
Մօսօն ամուսնացաւ գիւղի տանուտիրոջ գստեր
հետ և աղուէսաբար կարողացաւ ձեռք բերել
նորա ունեցած կարողութիւնը: Այնպէս որ նա
հիմա ունի բաւականին կարողութիւն և մենք,
ինչպէս տեսնում ենք, քեզ հետ վարւում է ինչ-
պէս մի թշնամու հետ: Մենք ինչ անենք, դու
որ ինձ գանգատում ես: Ուղիղն ասած քո բնա-
ւորութիւնը երբէք եղօրդ բնաւորութեան հետ
չի կարելի հաւասարել, քո ճշմարտութիւնն ու
բարեսրտութիւնը մեզ բոլորիս էլ յայտնի է: Ահա
մինը ես, որ բոլոր յոժարութեամբս ցանկանում
եմ որ քեզ հողի բաժին տան մեր գիւղի հողե-
րից: Թող միւսներն ևս յոժարին, մանաւանդ
տանուտէրը, որի պաշտօնը համարեա հիմա քո
եղբայրդ է վարում:

Օսին լռեց, ալլ ևս ոչինչ չասեց Սուգուին,
գնաց Մելիքենց տուն, որ այնտեղ ևս իւր վերայ
առած մասնաւոր ծառայութիւնն անէ:

ԳԼՈՒԽ Թ.

ՄԵԼԻՔ-ՎԻՐԱՊԸ, ինչպէս գիւղացիք ասում էին,
Հայոց հին էշխանական շառաւիզից մնացած մի
բարեպաշտօն ծերունի էր, ոչ մի զաւակ չունէր:
Նա անյալտ ժամանակից եկել էր այս գիւղը իւր
պառաւ կնոջ հետ և տեղաւորուել: Վիրապն
ունէր մասնաւոր հողի բաժին գիւղապատկան
հողերից և մի փոքր բաժին սեպհականութիւն
անտառից: Յայտնի չէր, թէ ինչ ժամանակից
նորան այս բաժինները հասել էին:

Օսինը շատ յարգում էր այս անդաւակ ծերու-
նիներին, մանաւանդ որ նոքա շատ բարեսիրտ
անձնաւորութիւններ էին: Վիրապի տնտեսու-
թիւնը երկու կով էր և տասը ոչխար, որոնց մի-
ջոցաւ իրանք կառավարում էին գիւղի մէջ:
Թէե ունէին նոքա մեծ և ընդարձակ տներ, ամ-
բարներ, մարագներ, բայց թէ ինչք համար էր,
յայտնի չէր և չկար մէկը, որ այդ եղածներից

ՀԱԿՈՒԲԻ

Օսինը ՄԵԼԻՔԻ անասունները հոգալուց և
ալն տնտեսութիւնը անելուց յետոյ՝ մի կտոր հայ
առաւ ուտելու:

ՄԵԼԻՔԸ Օսինին տեսնելով հարցրեց.

— Օսին երեկ ուր մնացիր, որ չեկար մեզ մօտ,
գիտես ինչ գժուարութեամբ կովերի ու ոչխար-
ների պիտուքները հոգացի, չէ որ, այ որդի, ես
քեզ սիրում եմ որդուս նման: Խեղճ պառաւ կինս
անգամ ինձ օգնելով՝ դարձեալ չկարողացանք ինչ-
պէս ալէտք էր կանոնաւոր կերպով անասուններին
կարգաւորել:

— Հայրիկ, երեկ զոհեցի անտառը չտեսածս
տեղերը ման գալու և ծանօթանալու համար:
Նատ հեռու տեղեր գնացի անտառի միջով, մը-
տայ ձորեր, բարձրացալ լեռներ և բլուրներ, ու
տեսայ որ մեր անտառը ոչ վերջ ունէր և ոչ
սահման:

— Որդի, միայնակ անտառ գնալը շատ եր-
կիւղալի է, կարող են հանդիպել զանազան պա-
տահարների, նամանաւոնդ գաղանների: Մեր

անտառների մէջ զանազան ժամանակներ տեսնուած են եղել (Հիւրիներ) դիցուհիք, վիթխարի կենդանիք և այլ տեսակ հրէշներ։ Զգուշացիք, խորհուրդ չեմ տալ այդպիսի վտանգաւոր տեղեր միայնակ գնալու, զգուշացիք, մի այլ ևս այդպիսի դիտաւորութիւններ ունենալ։

Օսինը շնորհակալ եղաւ ծերունու խրատներից և իւրեան պատկանած մի քանի ծառայութիւնները կատարելուց յետոյ՝ դուքս եկաւ Մելիքենց տանից, գնաց իւր խրճիթը։

ԳԼՈՒԽ Փ.

Օրերն անցնում էին մէկը միւսի յետելից։ Օսինը իւր սովորական տների ծառայութիւնը անթերի կատարում էր։ Վերջապէս հասաւ Օսինի նշանակեալ տասնօրեայ ժամանակամիջոցը։

Բայց ոչ ինքը՝ Օսինը և ոչ մի գիւղացի իւրեանց գիւղից քսակի կորստեան մասին ոչինչ տեղեկութիւն և ձայն չտուին և չէր լսւում։

Ինքը Օսինը դիտմամբ միշտ գնում էր այն-

տեղ՝ ուր շարունակաբար գիւղացիք հաւաքւում էին, ասում, խօսում և տեղեկութիւններ տալիս, բայց ոչ մի զրոյց և տեղեկութիւն չկար ոսկիների մասին։ Նա զարմանում էր, թէ ինչպէս կարելի էր, որ այդչափ ոսկի կորցնողը չմտաբերէր իւր կորուստը գտնելուն։

Սուածին անգամ Օսինը իւր գիւտը երազ կարծեց, բայց երբ հանեց ծոցից երեք վայրուն ոսկիքը, ստուգուեց, որ ուղիղ է, երազ չէ։

Վերջապէս տասն օրն ամիս՝ դարձաւ, դարձեալ ոչ մի հարց ու փորձ տեղի չունեցաւ կորուսեալ քսակի մասին։ Մի երեկոյ, սովորականից կանուխ, Օսին եկաւ իւր խրճիթը, տեսաւ որ իր ծանօթ ընկերները շները արդէն տեղաւորուած էին ամենքը իրենց տեղը։

Օսինը հրաւիրեց գազաններին խրճիթից դուրս գնալ, իսկ ինքը խրճիթի քարը դէմ գրեց, մօտեցաւ քսակը պահած տեղէն հանեց և հաշուեց մի առ մի։ Դուրս եկաւ, որ քսակի մէջը կայ եղել երեք հազար ոսկի՝ հաշուելով և այն իւր վերառած երեք հատ ոսկիքը։

—Ուրեմն այլ ևս երազի բան չմնաց, հաստատ է, որ հիմա ես եմ տէր երեք հազար ոսկու: Բայց հարցը մնաց թերի, թէ ինչ պիտի անէր նա այդ երեք հազար ոսկին, քանի որ ոչ մի ոսկի իւր կեանքումը չէր ունեցել: Օսինը բաւականին երկար մտածեց թէ ինչ ձեռվ գոլծադրէ այդ հարստութիւնը և ինչ ճանապարհաւ:

Նա ամբողջ գիշեր մտածելուց և դատելուց լետոյ՝ վճռեց որ միայն իւր գործին յարմարութիւն ունի Մելիք-Աիրապը, որի միջոցաւ նա իւր զիճակը կը կարողանայ կարգադրել: Քսակը կրկին թողեց իր տեղը, վերցնելով նորանից միայն երեսուն հատ ոսկի:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Միւս օրը, առաւտուը վաղ Օսինը գուրս եկաւ խրճիթից և ուղղակի գնաց Մելիք-Աիրապի տունը: Այնտեղ սովորական գործերը հոգալուց յետոյ՝ գնաց Մելիքի սենեակը, որտեղ Մելիքը նստած աղօթում էր ալսպէս.

Օրհնեալ ես, Աստուած,

Գթած ողորմած,

՚Ի վերալ համայն

Քո տիեզերաց:

Գովեալ ես, Աստուած,

Թագաւոր փառաց,

՚Հխող և տիրող

Քոլոր էակաց:

Գթած գերագոյն,

Քո խնտմով անհուն,

Օրք առ քեզ դիմեն

Յուսով հաստատուն:

Հալը սուրբ Արարիչ,


Տէր գոյացուցիչ,

Համայն բնութեանց

Դու ես ստեղծիչ:

Օրդիդ Սուրբ Աստուած,

Կից Հօրդ փառաց,



Մարդացար մարմնով
Փրկել զարարած։

 Հոգիդ Սուրբ Աստուած,
Աղքիւր ես շնորհաց,
Անբաժան ընդ Հօր
Եւ Որդւոյ փառաց։

 Սուրբ Երրորդութիւն,
Իսկ մի բնութիւն
Երիւք բաժանեալ
Մի աստուածութիւն։

 Աստուած Եհովա,
Գթա և ներեա,
Յանցանաց իմոց
Թողութիւն շնորհեա։

 Տէր Աստուած որ Ե՞ն,
Գոհանամ զքէն,
Փառաւորեալ մնաս
Յաւիտեանս ամէն։

Օսինը մօտեցաւ Մելիքին.
— Հայրիկ, ես մի խնդիր ունիմ քեզ առա-
ջարկելու, միջոց ունիս, կըբարեհաճես լսելու։
Ի՞նչ Օսին, ասա՞ որդիկ։
— Ես այս գիշեր շատ մտածելուց յետով՝ վըճ-
ռեցի գալ քեզ մօտ և խնդրել քո այն փոքրիկ
ցանքի տեղը իմ վերայ վաճառելու, որովհետեւ
մեր գիւղացիք յոժարութեամբ ինձ չեն տալիս
հողի բաժին և ես չեմ սիրում վէճ բանալով
պահանջել նորանցից ինձ հասանելի հողի բաժինը,
որպէս այս գիւղի հասարակութեան անդամ։
Ես ունիմ երկար ժամանակներից իմ մաս-
նաւոր ծառայութեանցս միջոցով մի փոքրիկ գու-
մար, որոնք հաւտքել եմ փայտ կտրելով և ծա-
ռայելով։ Ահա այս է իմ գումարը, 20 հատ ոսկի,
թեթելինելու համար ես ոսկու վերածեցի, եթէ
յոժարանում ես, ոսկիքը քեզ լինի և դու տուր
ինձ քո հողը։
— Օսին, որդիկ, շատ ուրախ եմ, որ քո աշ-
խատած փողերը շինել ես ոսկի և խնամքով պահ-
պանել եմ։ Սորանք շատ են իմ հողի արժողու-

Թիւնից։ Դրանք կըկին դիր քո գրավանը և նըստիր այստեղ մօտս, ես բան ունիմ քեզ ասելու, որ վազուց արդէն մտածել էի, յարմար միջոց չէի կարողանում գտնել, ուստի ասելիքս մնում էր անկատար։

—Իմ խորհուրդս այս է, որ դու ընդ միշտ մնաս իմ տանը որպէս իմ հարազատ որդին։ Քեզ լաւ յալտնի է, որ որդի չունիմ և չեմ ունեցել։ Ես տեսնում եմ, որ թէ ես և թէ իմ կինը բոլորովին պառաւել ենք, ես համարեա 80 տարեկան եմ և կինս 76։ Ես ունիմ այս տունը և տան միջի բոլոր պարագայքը, ունիմ ամբարներ, խոտնոցներ, մարագներ և այդ քո ցանկացած հողը. ունիմ նոյնպէս և անտառի մէջ Կաթնաձոր ասած տեղում անտառից մասը, որից իրաւունք ունիմ ընդ միշտ օգտուելու։ Ահա այս ամենը ես թողնում եմ քեզ ժառանգութիւն, միայն այն պայմանաւ, որ դու իբրև իմ հարազատ որդի և մենք, որպէս քո հարազատ ծնողներ, ապրենք միասին Աստուծոյ պարգևած բարիքներով, միայն թէ դու աշխատիր գործել և ոչ ծուլանալ, իմ

և իմ ամուսնու ունեցած բոլոր կարողութիւնը քո սեպհականութիւնն է, մենք արդէն վաղուց ցանկացել էինք քեզ որդեգրել։ Ուրեմն դու որ պէս մեր տան հարազատ որդի, պէտք է այստեղ մնաս և կտուավարես։ Աշխատիր, որքան կարող ես, ձեռնհաս լինել ամենայն մի գործում օգտուել և աւելացնել մեր ունեցածը, համարիր թէ բոլոր այս պատրաստած գոյքը քո հարազատ հայրը քեզ համար է թողել ժառանգութիւն։ Ուրեմն և դու պէտք է աշխատիս քեզ թողած ժառանգութեան վերայ կըկին և կըկին նոր ժառանգութիւն քո ապագայ զաւակներիդ և ընտանեացդ համար։

Ահա իմ արտի ցանկութիւնը, Օսին, և իմ քեզ ասելու խորհուրդը. յոյս ունիմ, որ կըլուժարիս և իմ առաջարկութիւնը կընդունես, այնպէս չէ։

Օսինը իսկոյն վեր կացաւ ծերունի Մելիք Աիրապի և նորա ամուսնու, պառաւ Մարգարտի ձեռքը համբուրեց։

Մելիքի խօսակցութեան միջոցին պառաւը ներս ը մտել և նստել նորանց մօտ։

Նատ և շատ շնորհակալութեամբ համբուրեց
Օսինը ծերունու ուկրացած ձեռքերը և յայտնեց,
որ նա պատրաստէ բոլորովին մեծ երախտագիտու-
թեամբ ընդունել Մելիքի առաջարկութիւնը և
մնալ նորանց համար երախտապարտ և հարազատ
որդի, ծառայելով նորանց, որպէս իւր հարազատ
ծնողաց:

Մարգարիտը—Մելիք Վիրապի ամուսինը Օ-
սինին յայտնեց, որ այս օրից նա կարող է գալ իւ-
րեանց տունը և բերել իւր հետ, եթէ ունի իւր կի-
սաւեր խրճիթի մէջ իւրեան պատկանած իրեղէն-
ները և որ անկիւնում կամ կողմում ցանկանում է,
կարող է ընտրել իւր բնակութեան համար տեղ:

Օսինն այս երկու ծերունիներին կրկին և
կրկին գոհութիւն և շնորհակալութիւն տալուց
յետոյ՝ դուրս եկաւ և գնաց իւր կիսաւեր խըր-
ճիթը, պառաւի հրամանը կատարելու:

Օսինը տեղաւորեց Մելիքենց տան մէջ ա-
մենախ յարմարութեամբ: Մելիքը յայտնեց բոլոր
գիւղի հասարակութեանն Օսինին իւրեան որդի և
ժառանգ հաստատելը և իւր բոլոր գոլքի տէրը

լինելը:

Այնուհետեւ Օսինը բոլոր գիւղացոց մէջ ճա-
նաչուեց մի կարողութեան տէր և Մելիքի փոխա-
նորդ ամենայն մի գործում, թէ հասարակութեան
և թէ արքունական շրջաններում:

Այնուհետեւ Օսինը կամաց կամաց Մելիքի մեծ
գոմերը և մարագները լցրեց ամենայն տեսակ
տանու անասուններով և բերքով: Նա դարձաւ
գիւղի առաջին համփան, այնպէս որ ամբողջ
գիւղի մէջ շատերն Օսինին ծառայելով էին ի-
րանց ապրուստն անում:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Անցաւ ամբողջապէս երկու տարի. Օսինը Մե-
լիքենց տան մէջ ապրում էր լիուլի յաջողութեամբ
և յառաջադիմութեամբ

Մի օր ծերունի Մելիք Վիրապը մտաւ Օսինի
մօտ և ասաց, Օսին ես եկալ քեզ հետ մի խոր-
հուրդ անելու և քեզ խորհուրդ տալու:

Օսինը դուռը փակեց նստաւ Մելիքի մօտ:
—Պատրաստ եմ քեզ լսելու, հրամայեցէք
հայրիկ, ասաց նա:

—Օսին, ես գգում եմ, որ ծերութեանս օ-
րերը քայլ առ քայլ իմ վերայ աւելի զօրեղանում
են, նոյնն է և իմ կնոջ վերայ: Մենք չխալուե-
ցանք, որ քեզ որդիացրինք, շատ ուրախանում և
զուարթանում ենք մենք, երբ քեզ տեսնում ենք
լաւաշադէմ և լաջողակ: Քեզ մենք ընդունել ենք
որպէս մեր իսկական ժառանգը իսկ ծնողաց հա-
մար Բնչն է ամենամեծ բաղդաւորութիւնը, եթէ
ոչ իւրեանց ժառանգների պտուղները գրկելու:
Մենք ցանկանում ենք քեզ ամուսնացնել, որ
գոնէ քանի կենդանի ենք, համոզուած լինինք,
թէ մեր տունը կը շարունակուի բարի լիշտակով
և մեր անուան արժանաւոր ժառանգներով: Եւ
ահա այս մասին կինս, պառաւ քո մայր Մար-
գարիտը հաւանել է Զաքոյենց աղջկանը, որին
շատ գովումեն: Իսկ ես որպէս ծանօթ Զաքոյեանց
Մուրադի բարեբարոյ անձնաւորութեանը ցանկա-
նում եմ որ դու ամուսնանաս նորա դստեր Վար-

դուհու հետ, որը շատ պարկեշտ օրիորդ է:
Նատ ցանկալի է մեզ որ այս գործը կատարուի
և գլուխ գայ՝ գոնէ մեր կենդանութեան ժամա-
նակ: Խնչպէս քեզ երջանիկ և յաջողակ տեսանք,
ուզում ենք որ տեսնենք և քո ամուսնութիւնն
ու որդոցդ: Այն ժամանակ հանդիստ հոգով կը կն-
քենք մեր մահկանացու կեանքը՝ համոզուած լինե-
լով՝ որ մեր տունը լեցուած կը լինի մեր լիշտակ-
ներով: Օսինը համաձայնուեցաւ ընդունել Մելիքի
առաջարկութիւնը, ամուսնացաւ Վարդուհու հետ
և շատ բաւական էր իւր ամուսնական կեանքից, նա-
մանաւանդ երբ ծնուեց նորան անդրանիկ որդին:

Հետզհետէ նա ունեցաւ շատ զաւակներ, ապ-
րում էր բաւական իւր վիճակից և բարեբարներից:

Մի օր Օսինն իւր տան վերնայարկում նստած՝
նախում էր անտառի դալարաւէտ լեռների, ձորերի,
կոհակաւէտ շղթայի նման միմեանց միացած բլուր-
ների վրայ: Յանկարծ ներս մտաւ նորա մօտ իւր
եղբայր Մօսինը: Օսինը զարմացաւ, երբ տեսաւ
Մօսինին: Առաջին անգամն էր, որ եղբայրը իւր
դռնից ներս էր մտնում:

Օսին, ասաց Մօսինը, դու զարմանում ես,
որ ես եկել եմ քեզ մօտ. Ես գիտեմ որ ինձ չես
համակրում և իրաւունք էլ ունիս, որովհետեւ
զգում եմ արածս տմարդութիւնը: Բայց այս
թողնենք մի կողմ, եկել եմ քեզ մօտ մի բան
հարցնելու, լոյս ունեմ որ ճշմարիտը կասես և
կըխոստովանիս, ըստորում ճանաչում եմ քեզ,
որ ստախօս չես: Խնդրեմ ինձ ուղիղ ասես, ար-
դեօք ի՞նչ դէպք պատահեց քեզ, որ դու այդպէս
հարստացար և կարողութիւն ճարեցիր: Թէ Մելիք
Վիրապը չունէր այդչափ կարողութիւն, այդ ոչ
միայն ինձ, այլ մեր գիւղացոյ բոլորին պարզ
լայտնի է: Քո ունեցած կարողութիւնը տասն ան-
գամ կրծախէ Մելիքին: Հիմա ի՞նչ պատահեցաւ,
որ այս մեծ փոփոխութիւնը եղաւ, ասա խնդրեմ
ճշմարիտը, առանց մի բան ծածկելու:

Օսինը լուռ էր, չէր հասկանում, թէ Մօսինի
հարցին ի՞նչ պատասխանէ:

— Ինձ չես ցանկանում խօստովանուել քո
գաղտնիքը, Օսին, ասաց Մօսինը:

— Մօսին, ի՞նչուց ստիպուած հարցնում ես այդ:

— Որովհետեւ գիտեմ, որ դու սորանից չորս
տարի առաջ մի աղքատ և թշուառ տղայ էիր,
ես անգամ չէի ուզում քեզ տեսնել և հանդիպել,
այժմ ի՞նչ եղաւ, որ այսպէս հարստացար, և բաղ-
դաւորուեցար, ուղիղ ասա ինձ, չէ որ մենք արիւ-
նակից եղբայր ենք, գուցէ ես ևս քո ճանապարհը
բռնելով այդ գրութեանը հասնեմ: Օսինը հաւա-
տաց Մօսինի ասածին, ցանկացաւ որ իւր եղբայրն
հանդիպի նոյն բաղդին, նա պարզ սրտով մերկա-
ցաւ և խօստովանուց իւրեան պատահած դէպքը
էլ անտառի մէջ, օրիորդ „Կարօտութեան“, հանդի-
պելը. պատմեց թէ այն ի՞նչ անբնական կազ-
մուածքի տէր կին էր, միս և արիւն չունէր և
այդ հիանալի գեղեցիկ էակը աղջկայ դիմակով էր.
Երեսում, իսկ երբ ինքը նորան ցօշափում էր, կար-
ծես փայտի էր դիպչում, բայց միևնոյն ժամա-
նակը խօսում էր շատ ճարտար և միշտ սիրոյ
գաղափարներ էր արծարծում:

Օսինը չծածկեց, որ ինքը երկիւղ կրելով աղ-
ջկանից՝ խաբէութեամբ նորան տանում է և թա-
ղում իւրեանց գերեզմանատան մէջ. որոշ ցոյց

տուեց մինչև անդամ աղջկայ գերեզմանի տեղը
և գերեզմանի վերայ դրած տախտակեալ նշանը:
Օսինն ասաց, որ երբ ինքը օրիորդ Կարօտութեան
թաղեց և վերադարձաւ իւր իրածիթը, զգաց մի
թեթևութիւն, ուրախութիւն և յաջողութիւն:
Նա չթագցրեց յայտնել և քսակով ոսկու գիւտը
պարզ առանց մի կէտ ծածկելու: Պատմեց Օսինը
իւր հարազատ եղբօրն ամեն բան: Մօսինն Օսինի
բոլոր պատմած հանդամանքը լսեց և նկատեց,
որ ասածներն ուղիղ էին: Նա դուրս եկաւ Օսինի
տանից զալրացած սրտով և հոգով ու գնաց ուղ-
ղակի իւր տունը:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Մօսօն Օսինին տեսած օրից շարունակ երեք
օր ոչ հանգստութիւն ունէր և ոչ գաղար: Նա
մտածում էր գիշեր և ցերեկ թէ բնչ հնար գործ
դնէ, որ Օսինին նոյն անբաղդ դրութեան մէջ
կը կին ձգէ և թշուառացնէ, ինչպէս առաջ էր:
Այս մտածմունքն էր միայն Մօսինին զբաղեցնողը:

Չորրորդ գիշերը՝ Մօսինը ծածուկ տանիցը
դուրս է գնում և մտնում է գերեզմանատուն,
գտնում է Օսինի ցոյց տուած գերեզմանը, ուր
թաղել էր նա օրիորդ Կարօտութեանը. փորում է
գտում է դագաղը, ձայն է տալիս. « Օրիորդ Կա-
րօտութիւն, կենդանի ես, թէ ոչ:

« Օրիորդ գագաղի միջից նոււաղած և կիսամեռ
ձայնով հազիւ հազ պատասխանաւ է Մօսինին.
« կեն... դա-նի... եմ... այս:

Եթէ ես քեզ ազատեմ այս քո պինդ գամած
գագաղից, իմ ցոյց տուած բարեկամութեան փո-
խարէն դու մի բարերարութիւն կանես ինձ:

— կանեմ... ար... ձա... կիր:

Մօսինը շուտով կափարչի գամերը քակեց և
գագաղը կոտրեց, դուրս հանեց օրիորդ Կարօտու-
թեանը, որը կիսամեռ հազիւ հազ շարժում էր
և թողեց ազատ դուրս գալու:

Երբ Կարօտութիւնը շնչասպառ գերեզմանի
փոսի եզերը կանդնած՝ ժողովում էր իւր կիսա-
մեռ ոլժը, մօտեցաւ նորան Մօսինն և ասաց:

— Օրիորդ Կարօտութիւն, տեսար իմ եղբայր

Օսինը քեզ ինչ աստիճան խարէութիւն արաւ,
քեզ գերեզմանի մէջ թաղեց և ինքը ծածուկ փա-
խաւ քո մօտից. եթէ ես չտեղեկանայի նորանից
իւր գաղտնիքը և չգայի այստեղ քեզ ազատելու,
դու մի քանի ժամանակից յետոյ բոլորովին կը
մեռնէիր: Ուրեմն դու վրէժխնդիր եղիր եղբօրիցս
և նորան կըկին ձգէ առաջուան վիճակի մէջ:

Հիմա նա ալնպիսի յաջողութեան և երջան-
կութեան է հասել, որ չունին իշխաններն անգամ:
Ես իմ կողմից խնդրում եմ, կատարիր իմ ասածս,
դորանով դու ինձ ցոյց տուած կըլինինս մի մեծ
ծառայութիւն և դուրս կըգաս իմ քեզ արած
երախտիքի տակից, դորանով դու պարտավճար
կըլինես: Թէ, ուրեմն, շուտ գնա եղբօրս մօտ,
հիմա դու կըգտնես նորան իւր տանը, այն է Մելիք
Վիրապի տանը, վերնայարկում քնած:

Օրիորդ Կարօտութիւնը երբ Մօսինի առա-
ջարկութիւնը լսեց սարսափեց և ասաց.

—Իմ ազնիւ բարերար, իմ թանկագին ազա-
տարար, դու ինձանից ալնպիսի բան ես խնդրում
և առաջարկում, որ ես երբէք և յաւիտեանս

չեմ կարող կատարել, ըստորում ես այսուհետեւ
չեմ համարձակիլ Օսինի հանդէպ ելնելու և նորա
աչացը երեալու, որովհետեւ նա ապառաժ ժայ-
ռից աւելի պինդ սիրտ ունի, նա մանաւանդ, որ
ինձ կենդանոյն թաղելու ժամանակ պատուիրեց
և ասաց, որ եթէ ես կրկին նորա աչաց առաջը
դուրս գում կամ ներկայանամ, նա ինձ կենդանոյն
պիտի ալրէ: Ի սէր Աստուածոյ, ինձ նորա երեսն
երեւնալուց հեռի պահիր, ինձնից մի պահանջիր
նորան կրկին ներկայանալու: Բացի գորանից խըն-
դրիր և ինչ պատուէր ունիս հրամայիր, ես ամե-
նայն բանով պատրաստ եմ սրտի լոժարութեամբ
կատարելու, որ քեզ երախտապարտ չմնամ:

—Սիրելի օրիորդ Կարօտութիւն, ասաց Մօ-
սինը, ես չեմ կարող համբերել և հանգիստ սըր-
տով նայել ու տեսնել իմ եղբայր Օսինին այնպիսի
յաջողութեան և առաջադիմութեան մէջ, իմ
նախանձը դէպի նա շատ է ճնշում և մաշում
ինձ:

Մի օր նա ինձ խնդրում էր, որ ես իւրեան
իմ մօտ ծառալ վարձէի, ես չլուժարեցալ, իսկ հի-

մա նա ինձ և ինձանից շատ հարուստներին է ծառայեցնում։ Ո՞չ, ո՞չ, ես նախանձից կըմահանամ նորան բաղդաւոր և երջանիկ տեսնելով, եթէ ունիս դու երախտագիտութեան գոնէ մի փոքր նշոյլ, ցոյց տուր ինձ, խոստացիր, որ Օսինին՝ իմ եղբօրս հետ բարեկամանաս և անբաղդութեան մէջ ձգես։

—Մօսին, այդ Բնէ ես ասում, ասաց Կարօտութիւնը, միթէ ես այնքան ոյժ ու կարողութիւն ունիմ, որ կարողանամ Օսինի պէս անձնաւորութեան դէմ դնել, որը ունի հուժկու կամք, ճիգ թափող աշխատութիւն և ամենապարզ ճշշմարտութիւն, ո՞չ, բոլորովին ո՞չ, ես այդ չեմ կարող և չունեմ վստահութիւն. դու որքան կամենաս ունեցիր նորա դէմ նախանձ և ատելութիւն, բայց ես, ես որ նորան ճանաչում եմ, անկարելի է ինձ նորան միւս անդամ ևս հանդիպել և կամ մերձենալ։

Օրիորդ, եթէ ալդպէս է, դու ապերախտ ես գտնւում իմ առաջ, ես ստրջանում եմ, որ քեզ գերեզմանից դուրս հանեցի և բարիք արեցի. —

գնա ուրեմն, դու ինձ հետ բարեկամ չես։

—Ո՛, իմ ազնիւ ազատարար, ինչպէս կարող եմ ես քեզանից բաժանուել և հեռանալ, չէ որ դու իմ կեանքս ազատեցիր և նոր կեանք տուիր, ես երդուալ և վճռեցի այն րոպէին, երբ դու ինձ դագաղից դուրս հանեցիր, որ ես երբէք չմոռանամ քեզ և չժողում միայն։ Թէ ներկայութեամբս և թէ անտեսանելիներդործութեամբս, դուցէ և յաւիտեանս կըմնամ քեզ հետ անբաժան կենակցութեամբ։ Ուրեմն ինչպէս ես դու հալածում և հեռացնում, երբ ես երդուել եմ մշտապէս կենակցել քեզ հետ։ Ուր որ բարեհաճում ես գնալ, ես անբաժան եմ քեզանից։

—Օրիորդ, եթէ ալդպէս է, ես քեզ կրկին գերեզմանի մէջ կըդնեմ լաւ է էլի այնտեղ մնաս։

—Մօսին, այդ վաղ էր, որ Էշը կազ էր. դու ինձ այլ ես չես կարող գերեզման դնել, ինձ գերեզման կըդնէ միայն Օսինի պէս անձնաւորութիւնը, որին ձեր գիւղացիք լիմար էին ասում, ըստ որում քիչ էր խօսում և հատ հատ էր խօսում, իսկ շատ էր մտածում և գաղափարներ էր կազմում։

Ես նորան շատ էի սիրում, բայց նա ինձ տեսած
րոպէից ատեց: Ընդհակառակն ես քեզ գործունեալ
մարդ կարծելով ատում էի, բայց դու ինձ եկար
գերեզմանից գտար և սիրեցիր, ուրեմն ես ինչպէս
կարող եմ քեզ ատել, քանի որ դու ինձ սիրում
ես սրտով, ես այդ զգում եմ հոգով:

Այլ ևս Մօսին չունէր ոչ մի յարգելի փաստ
օրիորդ Կարօտութեան դէմ խօսելու. նա լռեց
և գլուխը քաշ արած գնաց դէպի տուն սար-
սափելով խաւարալին մթից, նամանաւանդ օրի-
որդ Կարօտութիւնից, որովհետեւ նոր զգաց, թէ
ինչ աստիճան սխալմունք էր գործել իւր նախան-
ձոտութեան ձեռքից: Նա շուտ շուտ յետ էր
գառնում և նայում տեսնելու հաստատապէս, թէ
արդեօք օրիորդ Կարօտութիւնը հետեւում է իւր-
եան, թէ հեռացել է, բայց քանի նայեց և տե-
սաւ մի ստուեր օրիորդ Կարօտութեան նման և
ոչ թէ օրիօրդը: Ամեն մի նայած անգամին սառ-
չում էր արիւնը նորա երակների մէջ:

ՊԼՈՒԽ ԺԴ.

Մօսինը սաստիկ դալկացած և գունաթափ
հասաւ իւր դռան առաջը, վախից դողալով և
սարսափելով իւր արած գործի վերայ. նա չէր
կարողանում խօսել: Յանկարծ նկատեց նա որ
գիւղացիք հաւաքուել էին: Նա չկարողացաւ հաս-
կանալ թէ արդեօք բնչ հանգամանքի պատ-
ճառով հաւաքուել էին գիւղացիք ալնտեղ: Նա
լսեց, որ իւր ոչխարի հօտը հովիւի քնած մի-
ջոցին անտառի մէջ կորել է և թէ արդէն շատ
են հետախուզել չի յաջողուել գտնելը: Մօսինը
մնաց շուարած:

Գիւղացիք խորհուրդ տուին նրան մինչև լու-
սանալ չորոնել, ապա վաղ առաւօտեան գնալ՝ մի-
այն զինուրուած մի քանի մարդով և ոչ մենակ:

Մօսինը գիւղացոց խորհուրդը լսեց, թողեց
հօտը որոնելը և ուզում էր մտնել տուն: Յան-
կարծ մի գիւղացի շնչասպառ եկաւ և յալտնեց,
որ իւր խոտնոցը և նորա մօտ գտնուած ցորենի

ու գարու շտերմարանի մէջ հրդեհ է ընկել—հարկաւոր է օգնութեան համանել, զինի հրդեհը շարունակուելով հասնի բոլոր գիւղացոց խոտնոցներին և շտեմարաններին:

Մօսինը սարսափած ներս վազեց աներ, տառուտիրոջ մօտ, որ տկար պարկած էր անկողնու մէջ, անցքը յայտնեց և խորհուրդ հարցրեց: Տառուտէրը սարսափից ուշաթափուեց: Մօսինն աշխատում էր ուշքի բերել աներոջը, բայց բոլոր աշխատութիւնն անցաւ իզուր: Աներն այլ ևս չկար, նա արդէն մեռած էր:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Առաւօտը ծագեց, լոյսը բացուեց, արևը իւր ոսկեգոյն շառաւիղները տարածեց առանց մի որ և իցէ ամպի և այլ արգելքի: Ծաթեր գիւղի հասարակութեան մեծ մասը հաւաքուած էր տանուտիրոջ և Մօսինի դռան առջև տեղեկութիւն ստանալու թէ տանուտիրոջ հիւանդութեան մասին և թէ միւս պատահարների դրութեան վե-

րայ, բայց ոչ ոք չստացաւ մի մխիթարական տեղեկութիւն, բատ որում ինչ որ երեկոյեան պատահել էր, նոյնն էր և առաւօտը:

Ահա այս օրից Մօսինն օրէց օր սկսեց թշրուանալ, այնպէս որ նորա կինը վատ ճանապարհ գնալը կրկին շարունակեց, որդիքը անբարտաւան սնուած լինելով՝ շարունակեցին իւրեանց վատ սովորութիւնները: Համարեա փչացան նորա բոլոր անասունները, ալրուեց նորա ցորենի գարու շտեմարանները, հրդեհի ճարակ եղան նորա խոտնոցները և գարմանանոցները: Մահացաւ տանուտէրը՝ Մօսինին օգնող հուժկու ձեռքը, իր աները: Մօսինն իւր նախանձի ձեռքից այնպիսի վերջի անբաղդ դրութեան մէջ հասաւ, որ տատանում էր կարօտութեան և թշրուառութեան ծովացեալ ալիքների ձեռքը. գիւղացէք անդամ հեռի էին քաշւում նորանից և շատերը վատութիւններ էին անում, որոնց ինքն Մօսին իւր հարուստ ժամանակին ճնշել ու վատութիւն էր արել: Նոքա պատասխանում էին նորան փոխադարձաբար, համարեա մի մարդ հասարակութեան

մէջ չէր գտնուում Մօսինին ցաւակցութիւն յայտնելու, ըստ որում նա իւր կոպիտ բնաւորութեամբ ամենին զզուեցրել էր թէ անբարտաւանութեամբը և թէ իր խաբերալ լինելովը: Դեռ նորանցից շատերը ասում էին Մօսինին «գեռ քիչ է», և ճշմարիտ նա արժանի էր աւելի ևս թշուառութեան:

ԳԼՈՒԽ Ժ. Զ.

Օսինը իւր երջանիկ և առաքինի կնոջ և գեռափթիթ զաւակների հետ ապրում էր բաղդատորութեամբ՝ օրհնելով և փառաւորելով Աստծուն: Նորա ամենալաւ յատկութիւնը այն էր, որ ամենայն օր ցանականում և աշխատում էր օգնելու աղքատներին, թշուառներին և խեղճերին: Հասցնում էր նորանց միջոց, որին ինչ էր հարկաւոր, որին տեղ և գործ էր յանձնում աշխատելու, որին, բոլորովին առանց յայտնելու իւրեան, հասցնում էր ամենայն մի դէպքում իւր օգնութիւնը այնպէս, որ ամբողջ գիւղը համարեա կառավարուում

էր նորանով առանց մի որ և իցէ կարօտութեան, թէ հացի, թէ դրամական միջոցի:

Ինչպէս Օսինը օգնում էր բոլոր իւրեանց գիւղի հասարակութեանը, գիւղացիք ամեայն մի գործում նորան օգնում էին:

Օսինի գլխաւոր ցանկութիւնն էր, որ ոչ ոք պարապ և դատարկացրջիկ չմնալ, ամեն մարդ պարապի իւր որ և ից է գործովը: Եթէ մէկը արհեստ գիտէր, աշխատում էր առաջացնել նորան իւր արհեստի մէջ, եթէ երկրուգործութեան մէջ յաջողակ էր՝ միջոց էր տալիս նորան առաւել օգտաբեր լինելու:

Այսպիսով Օսինի կարողութիւնը գնալով այնքան աւելացաւ որ տասը տարուայ շրջանի մէջ տամնապատիկ կրկնապատկուեց. նորա կարողութեան մասին ոչ միայն Ծաթեր գիւղն էր խօսում, հապա բոլոր շրջակալ գիւղերին ու քաղաքներին էր յայտնի: Առաւել ևս գովանի էր նորա գերգաստանական դրութիւնը: Նորա որդիքը, որպէս բարի երեխալք օրինակ էին լինում գիւղացիներին: Մի խօսքով, բաղդը և երջանիկ օրերը գնա-

լով հետզհետէ աճում և զօրանում էին Օսինի համար, իսկ նորա զաւակները իւրեանց հօր հրամանին և դաստիարակութեան ներքոյ ապրում էին ազատ և երջանիկ:

Օսինի մօտ շարունակ իւրեանց գիւղացիք գալիս էին որը գործով և որը խնդիրքով: Նա զարմանում էր, որ իւր եղբայր Մօսինն երբէք չէր գալիս իւր մօտ այն օրից, ինչ օր որ երկել էր և խնդրել էր Օսինից նորա գաղտնիքը իմանալու: Օսինը ցանկացաւ տեսնել նորան և այդ պատճառաւ առաջարկեց, որ գալ իւր մօտ: Մօսինն եկաւ գունթափ, պատառոտի և համարեա բոկոտն, նըստեց Օսինի մօտ, բայց անհանգիստ հոգով և սըրտով: Նա հարցրեց Օսինին, թէ ինչի համար էր կանչել իւրեան:

— Ի՞նչ զիճակի և կենցաղավարութեան մէջ կապրես քո անբաղդութիւններից յետոյ, ասաց Օսինը: Ես ցանկացայ քո գրութեան հետ ծանօթանալ և քեզ խնդրեցի ինձ մօտ:

— Հազարաւոր գմբաղդ պատահարներից յետոյ, ասաց Մօսինը, ես յոյս ունէի, թէ մի օր

բաղդի անյաջող շրջանը կը հեռանայ ինձանից, բայց ընդհակառակը կարծես աւելի վատթարանում են:

— Զպէտք է վհատուել և զայրանալ, Մօսին, ըստ որում յաջողութիւնը և անյաջողութիւնը շատ սերտ բարեկամ են միմեանց հետ: Առաջինը պարգևում է մարդկանց ապահովութիւն, իսկ երկրորդը՝ ծալրահեղ կարօտութիւն, թէև երկուքն ևս աշխարհի շրջանի տակովն սրարշաւ ժամանակի թևերի տակ են անցնում, բայց խոհեմութիւն ունեցող մարդը միայն կարող կը լինի այդպիսի դիպուածների մէջ ապահով պահել իւրեան:

— Օսին, դու մեծ մեծ ես բրդում, ասաւ Մօսինը, եթէ դու իմ տեղը լինես, գուցէ անհամբերութիւնիցդ տրաքուես: Ի՞եզ համար ամենայն բան պատրաստ է և լիուլի, իսկ ինձ համար ամեն բան պակաս և կարօտալի: Ի՞նչ մարդ կը կարողանալ համբերել անօթութեան և ցրտի՝ կարօտ ամենալն մի պիտուքի... Ո՛չ, ո՛չ, չես հասկանում և չես զգում և ահա այդ է պատճառը, որ ալդպէս խօսում ես քո մեծ մեծ չափերով:

Մօսին, ես քո հարազատ և արիւնակից եղայրն եմ, եթէ օտար լինէի պիտի իմ կեանքին և քաշած նեղութիւններին դու ծանօթ չլինէիր, բայց եթէ խղճի մտօք և պարզ հոգով մտաբերելու լինիս, կըզգաս և կըհասկանաս, որ ներկայումս քո քաշած նեղութիւնը իմ քաշածների հարիւրերորդը չի լինիլ, բայց դու որովհետեւ նեղութիւն քաշելու սովոր չես և միշտ պատրաստի է եղել քեզ համար ամենայն բան, այդ պատճառով չնչին տարաբաղդութիւնները քեզ մահու չափ ծանր են թւում. միթէ չես մտաբերում որ քաղցած, զուրկ և մերկ ժամանակս ես դիմեցի քեզ օգնութեան, բայց դու ինձ ոչ թէ օգնեցիր, այլ չարժանացրիր երեսդ անգամ տեսնելու և այնուհետեւ զգուշանում էիր ինձ հանդիպել ճանապարհների մէջ։ Դու չէիր որ ուրախութեամբ օտարներին խնամք էիր տանում, իսկ ինձ զրկում։ Իցէ թէ յետամիտ էիր և չէիր մտածում թէ օտարի կերածը միշտ կորուստ է, բայց հասկացողը կըհասկանար, թէ ինչ բնաւորութեան ենթակալ անձնաւորութիւն էիր։

Իսկ ես, Մօսին, այդպիսի բնաւորութիւն չունիմ և չեմ էլ ունեցել. ես ամեն ժամանակ և ամեն մի միջոց քեզ օգնելու պատրաստ եմ. ես այնպիսի օգնական չեմ, ինչպիսին էր քո աները, որ օգնեց քեզ իւր աղջիկը տալով և աշխատում էր խորամանկութեամբ քո ձեռքով անիրաւութիւններ անել։ Իսկ ես քեզ մաքուր սրտով առաջարկում եմ իմ ունեցածից ընչի որ ունիս կարօտութիւն, առանց նեղութեան կարող ես բաձարակապէս տանել և օգտուել որպէս քո սեպհականութիւնը։

— Օսին, իմ աներն ինձ մի անիրաւութիւն արաւ, որ իւր փչացած դուստրը ինձ կնութեան տուեց։ Ես թերամտութեամբ աղջկալ և իւր հօրն ու մօր բնաւորութեանը ծանօթ չլինելով առանց որոշելու ամուսնացայ և վերջը զղչացի, բայց ուշէր։ Այնուհետեւ ես իմ աներոջ ձեռքին խաղալիք եղայ, նոյնպէս և կնոջս ստրուկը և գերին։ Անցածն անցել է, ուղղել այլ ևս չի կարելի, եթէ մի այլ բան ունիս, ասա՛։

— Մօսին, խոհեմ և խորամիտ մարդը որքան

և կինը անպիտան լինի, կարող է կանոնաւորել:
Ես չեմ ասում կորածների համար, այդպիսի
կանալք բացառութիւն են կազմում. ուղիղն ասել
և շատ անգամ ամուսիններն են պատճառ դառ-
նում իւրեանց կանանց կորստեան:

Դու գիտութեամբ ամուսնացար տանուտիրոջ
դստեր հետ, որ նորա հիմն աւազի վերալ դրուած
գոյքին և կարողութեանը տէր դառնաս, բայց
թէ քո և թէ աներոջդ իւրաքաչիւրիդ միմեանց
խարէութիւնները անցնում էին հետզհետէ ան-
նշմարելի մասնաւոր հետքեր թողնելով, այնպէս
որ դուք փամփուշտի նման ուռեցաք, մեծացաք
և լանկարծ տրաքուեցաք:

Քո բնաւորութեան հետ ես աւելի ծանօթ
լինելով նկատում էի, որ դու երբէք միտ չէիր
դարձնում, թէ աշխարհի ապրուստը Բնչ ճա-
նապարհներով և ինչ աշխատութիւններով են
ձեռք բերում մարդիկ: Դու տեսնում էիր, որ քո
աներոջ տան մէջ ամեն բան պատրաստի էր քեզ
համար և կարծում էիր որ այդ պատրաստութիւնքը
քո առաջադիմութեան պտուղներն էին և քո

շնորհքները: Բայց ոչ, այնպէս չէր, դու քո հաշուի
մէջ խարուած էիր, այն ամենը գէպքի բերմամբ
էր և ոչ թէ քո ջանքով առաջացած: միտդ բերում
ես արդեօք իմ կրած նեղութիւնն ու թշուառու-
թիւնը, ես իմ չարքաշ աշխատութեամբ և այլոց
ծառալելով մի փոքր կտոր հաց հազիւ կարողանում
էի ճարել, եթէ թան ևս գտնէի, այդ իմ լաւագոյն
ճաշն էր, քանի որ շատ օր առանց ոչինչ ուտելու
էի անցուցանում և կամ կանաչիք կամ անտառի
խակ և հասուն պտուղներով ստամոքսս էի
լրցնում: Մօսին, ճշմարիտն ասա՛, սուտ են ա-
սածներս:

Մօսօն լուռ էր, համոզուած էր Օսինի ասած
ճշմարտաթիւնների վերայ, բայց դարձեալ աչ-
քերից թափում էին նախանձի և ատելութեան
ոխերը գէպի եղբալրը:

—Վերջապէս Մօսին, ասաց Օսինը, Բնչ բանի
կարօտութիւն ունիս, կարող ես իմ տանից վերցնել
առանց քաշուելու և ամաչելու թէ ցորեան, թէ
գարի, թէ ոչխար, թէ կով, թէ եղն և թէ այլ ամե-
նալին ինչ, և այն ոչ թէ հիմա, այլ ամեն ժամա-

նակ, երբ հարկաւոր կըլինի գնա՞ ջոկիր և տա՞ր:

ԳԼՈՒԽ ԺԷ.

Անցել էին երկար ու ձիգ տարիներ այն օրից,
երբ օրիորդ Կարօտութիւնը Օսինին պատահել էր
անտառի մէջ:

Ահա մի օր Օսինը իւր վերնայարկի պատըշ-
գաբումը միայնակ նստած՝ նալում էր և զուար-
ճանում իւր շուրջը պատող անտառախիտ լեռների
և դաշտերի կանչաւէտ դալարիքներին:

Օրավարը կամաց կամաց հորիզոնից դուրս
գալու և աշխարհի օրը սկսելու վերայ էր
զբաղուած:

Օսինի աչքին ընկաւ այն ճանապարհը, որ
նա մի օր այս պահուս գնացել էր անտառը
լուսահատ և լի թշուառութեամբ, պատկերացաւ
նորա մտքի մէջ 30 տարի առաջ եղած այն դէպ-
քը, երբ նա պատահել էր անտառի մէջ օրիորդ
Կարօտութեան հետ:

Նա բոլոր մարմնով սարսուռ զգաց և վըր-

դովուեց: Յանկարծ կանուխ առաւտեան հնչող
սոսաւիւնի հետ մի խոր և նուաղ ձայն, կարծես
անտառի խորքերից էր դուս գալիս:

Ձայնը այնքան հեռուից էր գալիս, որ շատ
հնչումներ պարզապէս չէին հասկացւում:

Օսինը աչքերը դարձրեց դէպի աղօթարան, ուր
հեռուում երեսում էր իւր նախկին կիսաւեր խրճիթը,
որից միայն հողակոյտի նշաններ էին մնացել:

Նա ականջը մեծ ուշագրութեամբ զբաղեցրեց
դէպի լսուած ձայնը և բոլոր ուշագրութեամբ
աշխատում էր ամեն մի հնչիւնն որոշակի լսել
և հասկանալ: Բայց ձայնը այնքան հատ ու կտոր
էր գալիս և հասնում իւր ականջին, որ նա չէր
կարող գաղափար կազմել և միտք հանել նորա
հնչմունքից:

Օսինը մըմնջալով դէպի աղօթարանը աղօ-
թեց. — Ո՛հ Տէր, տիեզերաց կառավարիչ և համայն-
քնութեան և ստեղուածոց կարգադրիչ Աստուած,
փառք և գոհութիւն քեզ՝ Ամենեկալիդ, բիւրաւոր
անգամ փառք թէ իմ անարժան բերանից և թէ

բոլոր էակներից։ Դու ինձ քո հայրական գթոց
և խնամոց տակը առնելով պահեցիր և ազատեցիր
փորձանքներից և ներկալումս նոյնպէս պահում
ես ոչ թէ միայն ինձ և իմ որդոց, այլ բոլոր քեզ
ճշմարտութեամբ հաւատացողներին և օրհնող-
ներին։

Օսինը գեռ փառաբանութիւնը չէր աւարտած՝
առ լսեց նոյն ձայնը աւելի պարզ և հասկանալի։

— «Օսին, ես օրիորդ Կարօտութիւնն եմ. քեզ
խոստացայ և գերեզմանիս մէջ երդուեցի քո
հրամանիդ համաձայն չներկայանալ միւս անդամ
քեզ։»

Երբ Օսինը այս հատ ու կտոր հասկանալի
ձայնը լսեց, դադարեց ազօթելուց։

«Օսին, շարունակեց ձայնը, ես իմ խոստումը
պահեցի, բայց առանձին պարտականութիւն եմ
զգում աներեսոյթաբար այս մի քանի խօս-
քերը քեզ ասելու։ — Օսին, մի ժամանակ քեզ սի-
րում էի անսահման սիրով, բայց հիմա ատում եմ
քեզ նոյնպէս անսահման ատելութեամբ։ Ես ոչ
թէ միայն քեզ եմ ատում, այլ ատում եմ և

քո զաւակներիդ, որովհետև նոքա նոյնպէս սնուած
են և զարգացած քո անիրաւ դաստիարակութեամբ։
«Իմ սիրեկանները նորանք են, որոնք հակում
են և սիրում են ծուլութիւն, պղերգութիւն և
անգործունէութիւն. ըստ որում նորանք միայն
ինձ հետ կըզբաղուին և ինձ կըփալիալեն. նորանք
այլ ևս ժամանակ չեն գտնում պարապելու աշ-
խատութեամբ և գործով։ Ես մարդկանց շատ
հազիւ եմ մարմնով ներկայանում. ներկայանում
եմ միայն այն մարդկանց, որոնց գերագոյն սիրով
սիրում եմ։ Դու ինձ ատեցիր իմ այնքան ջերմ
սիրոյս համար ուրեմն և ես ատեցի քեզ բոլորովին
և ունէի իրաւունք ատելու։ Ես ծնուել եմ մարդ-
կային սերնդի ծնուելուց առաջ և կըմահանամ,
երբ մարդկային սերունդը կըվերջանալ աշխարհից։
Հօրս անունն է ծուլութիւն, մօրս անունը հեշտու-
թիւն, եղբօրս է պարապութիւն, իսկ ինձ կոչում
են, ինչպէս գիտես, Կարօտութիւն։ Դու որ ինձ
չսիրեցիր, կարծում ես որ սիրականներ չունիմ,
համարեա աշխարհի ամենամեծ մասը ինձ սիրում
է և շարունակ իմ սիրովն է տոշորւում։ Մարդ-

կութեան երկու սեռն ևս, զառամեալ ծերունիներից սկսած, մինչև թարմ մանուկները ինձ սիրում են ջերմ սիրով։ Ինձ դու խաբէութեամբ գերեզման դրիր, իսկ քո եղբայր Մօսինը քեզ նախանձելով՝ ինձ ազատեց, որ գամ քեզանից իմ ովը հանեմ, բայց ես ուխտազանց չգտնուեցայ իմ վճռի դէմ։ Թէև նա ինձ շատ խնդրեց, բայց ես նորա խնդիրն անտես արի, իսկ քո փոխարէն սերտ սիրով նորան սիրեցի և պիտի սիրեմ յաւիտեան թէ իրան և թէ ժառանգներին։

«Մեր գերդաստանի թագաւորութեան ոյժը աւելի տարածւում է արեւելեան աշխարհների սահմաններում, քան թէ արևմտեան աշխարհներում։ Արևմուտքում բնակող ժողովուրդները չարաչար ատում են իմ հօրս ու եղբօրս, իսկ ինձ և մօրս չափազանց սիրում են։ Կարծես բնութիւնը նորանց դատապարտել է աշխատելու և մտածելու. իսկ արեւելցոց բնութիւնը թողել է իւրեանց կամքին։ Այսպէս որ եթէ հարկը չստիպէ, դէպքը չբերէ, չպատրաստէ, նոքա երբէք չեն հարկ համարում ճնշուել մտած-

մունքների և հոգսերի մէջ, բարեկենցաղութեան և յառաջադիմութեան գործին պէտք գալու։ Թէև դու գտնւում ես արեւելքում, բայց դու բացառութիւն ես. ես նկատում էի, որ դու աշխատում էիր գործելու, պարապ չմնալ, այդ հակառակ էր իմ սիրային սրտին և իմ գաղափարին։ — Ե՞հ ինչ արած, դու ինձ յաղթեցիր, գորա փոխարէն ես իմ քնքոյշ սիրաք քեզ չնուիրեցի, այլ նուիրեցի այն միլիօնաւոր արարածոց, որոնք ինձ ծունը էին իջեցնում։ Նորանց տուի իմ սէրն ու զգացմունքը։

«Ես չեմ զարմանում քո վերայ, որովհետեւ քեզ նման բիւրաւոր անձնաւորութիւններ եմ տեսել աշխարհի մէջ, որոնք ինձ ատում են և անում են ինչ որ ինձ հակառակ է, ինչպէս հակառակ է սկը սպիտակին։ ՚Ն վերջոյ ես քեզ գերեզմանիս մէջ խոստացայ չներկայանալ մարմնով, այնպէս և կատարել եմ առանց այլեալլութեան, որովհետեւ ես խօսում եմ քեզ հետ շատ հեռու անտառից, բայց ոչ մարմնով, այլ անմարմին, իբրև ուրուական։

«Լսիր վերջի խօսքս, թէ դու և թէ քո լետնորդը
երբ և իցէ իմ գերդաստանի մի անձնաւորութեան,
այն է հօրս, որ է ծուլութիւն, մօրս, որ է հեշ-
տութիւն, եղբօրս՝ որ է պարապութիւն, և ինձ՝
որ եմ կարօտութիւն, հետ բարեկամութիւն
չանէք, նոքա որքան էլ ձեզ սիրեն, դուք ատեցէք,
թէև ծանր է այս ձեզ, բայց պէտք է ամենայն
ճիգ, աշխատութիւն գործ դնէք մեզ հակառակ
լինելու, եթէ ուզում էք այս և յաւիտենական
աշխարհի մէջ երջանիկ լինելու:

«Մենք Արարչի հետ վէճ ունինք և մշտապէս
հակառակ ենք, ովք գիտէ երբ այս կը վերջանայ:
Այն էլ լու գիտենք, որ եթէ վերջացաւ վայր
մեզ կը տանէ:

«Արդարեւ առաջի անգամին ես քեզ սիրում էի
սերտ սրտով, որովհետեւ իմ իսկ պատկերս էիր,
ըստ որում կարօտութիւն ասած բուն բար-բառ
ես քեզ վերայ տեսայ: Բայց երբ ստուգեցի,
որ կալտառ պատանի ես և աշխատութեան համար
ամեն ճիգ գործ ես դնում, անգամ ցանկանում
էիր անտառի մէջ բնակուել և գաղանաց հետ

ընկերութիւն անել, սիրտս քո վերայ ցաւեց,
մարմին մտայ և ներկալացայ քեզ, որպէս մի
գեռափթիթ օրիորդ և քո սիրոյ համար քեզ
հետ մտայ քո կիսաւեր խրճիթը՝ ցանկանալով
քեզ ինձ գերի անել, բանն այս է, որ որքան դու
ինձ արհամարում էիր, ես աւելի շատ էի սիրում
քեզ: Այնքան գերուեցայ քո սիրուց, որ քո ձեռքով
գերեզման մտայ: Բայց ինչպէս լաջողակ պատահեց,
որ քո եղբայրը, Մօսին, քեզ հետ նախանձ ունե-
նալու պատճառով եկաւ ինձ գերեզմանից հանեց,
այն պատճառաւ որ ես գամ քո մօտ բնակիմ և
սկզբի գրութեան մէջ ձգեմ քեզ: Նորա պահանջն
ալլ ես ես չէի կարող կտարել, ըստ որում ալ-
նուհետեւ իմ իրաւունքս չէր»: Այսպէս երկար ու
բարակ խօսելուց լետոյ օրիորդ Կարօտութեան
ձայնը հետզհետէ նուազում էր և անհասկանալի
էր գառնում Օսինի ականջին: Օսինը երբ նկատեց
որ ալլ ես չէր գալիս օրիորդ Կարօտութեան
ձայնը շուարած նստաւ, մտածելով դիպուածի
վերայ: Իչս պատշզսմբից ներքեւ և գնաց իւր
տնտեսութեան վերաբերեալ գործերը հոգալու:

Ծառաներին պատուիրեց գնալ անտառից փայտ
կըել, որդոցը հրամայեց դիւզատնտեսական ալ-
դին մշակել, ինքը գնաց իւր սեպհական ջրաղացը
թէ ստացած պողեաց և թէ մեքենայի որպի-
տութեան դրութիւնը տեսնելու և կարգաւորելու։
Ահա երեկոյեան հօտը գալիս էր տուն, կթել,
տեղաւորացնել՝ աղախինները կանգնած էին և
սպասում։ Օսինի տունն այնպէս կարգադրուած
էր, որ թէ գարնան, թէ ամռան, թէ աշնան և
թէ ձմեռուայ շարունակ պարապմունքը միշտ
կար և երբէք անգործ և պարապ նստող չկար,
բացի ծերունի Մելիք-Վիրապից և նորա կին
Շուշանից, որոնց ինքը խնդրում էր միայն վերա-
հասութիւն գործեն և ոչ թէ զործով պարապեն։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Մի օր ծերունի Մելիքը իւր մօտ կանչեց
Օսինին և նորա բոլոր ընտանեացը։ Օսինը շատ
զարմացաւ Մելիքի այս հրաւերի վերայ, առաւ
իւր հետ ամենքին և գնաց Մելիքի սենեակը,

որտեղ ծերը անկողնու մէջ պարկած համարեա
վերջին շնչի տուրեառութեան մէջն էր գտնւում։
Մելիքը նուազ ձայնով պատուիրեց նոցա նստել
իւր անկողնու շուրջը։ Ապա նա լոյսը կորցրած
աչքերով գարձաւ գէպի Օսինը և ասաց։

— Օսին, որդի, ես շատ էի փափագում տյս
օրուան, որ Ամենաբարի Աստուածն ինձ արժանա-
ցրեց։ Գոհութիւն և փառք նորա ամենակալ
կարողութեանը։ Ես բաժանեում եմ աշխարհի
մարդկալին լնկերութիւնից, Ցանկանում եմ մի քա-
նի խօսք ասել քեզ, քո ընտանեաց ներկայութեամբ։
բոլոր սրտով ուրախ եմ, որ ես քեզ լնդունեցի
որդեգիր և ժառանգ։ Դուք ինձ այնպիսի որդի
եղաք, որ ճշմարիտ պէտք է խոստովանուել,
հարազատ որդին չեք կարող երբէք լինել։ Ես
ի բոլոր սրտէ խնդրում եմ ամենակարող Արարչից,
որ ձեր գեռափթիթ զաւակները զօրանան, զար-
գանան և լինին ձեզ արժանի որդիք, ինչպէս
որ գուք ընտիր և արժանի որդի եղաք ինձ։ Թող
Արարիչ Աստուածը նորանց և ձեզ պահէ իւր
խնամքի ներքեւ առանց մի վտանգի և փոր-

ձանքի: Ես նոյնպէս ցանկանում եւ պատուիրում եմ, որ գուք և ձեր որդէքը, որպէս իմ իսկական ժառանգներս, իմ չնչին կարողութեան վերալ տէր լինելով, լինէիք և տէր իմ մականուանը Գնա՞, երջանկացիր Աստուծոյ օրհնութեամբ և իմ սրտի ցանկութեամբ: Վերջի խօսքերը հազիւ ճնշուած և չորացած կոկորդից գուրս էին գալիս ծերունի Մելիքի բերանից: Նա լուս մնաց. իսկ Օսինը համբուրեց նորա ձեռքը և որդոցը համբուրել տալուց յետոյ հեռացրեց նորանց Մելիքի մօտից: Ծերունի Մելիքը առաւօտն արդէն չկար, կնքել էր իւր մահկանացուն: Շատ երկար միջոց չտեսեց, Մելիք Վիրապից յետոյ մահացաւ և նորա ամուսինը՝ ծերունի Շուշանը: Օսինն զգաց ծերունիների պակասութիւնը և շատ ցաւեց:

ՊԼՈՒԽ ԺԹ.

Մի երեկոյ՝ երբ Օսիննց տան ցերեկուայ բոլոր գործերը վերջացրած և հաւաքուած էին թէ որդէքը, թէ ծառալիքը և թէ ծառալող կանալք,

Օսինը նկատեց, որ բոլոր իւր տան մէջ գտնուած անձնաւորութիւնները ներկայ են, նստեց նա սեղանի գլուխը և խօսեց յետագայ խօսքերը իւր զաւակներին: Սիրելի որդիք. «Իմ սրտի ցանկութիւնն է, որ գուք մաքուր սրտով ճանաչէք ձեր Արարչին և ձեր յաջողութեան և անյաջողութեան միջոցին աղօթէք նորան, գուք պէտք է գիտենաք, որ թէ գուք և թէ այս գիւղի միջի մարդիկը բոլորեքեան իսկ և իսկ ձեզ նման մարդիկ են: Նորանք չունեն կարողութիւն, չունեն գործ և չունեն ուտելու հաց. իսկ գուք ոչ թէ հաց, այլ ունիք ձեզ համար պատրաստի կաթ, սեր, կարագ, մեղր, մշտապէս գառան միս և ալլ և ալլ զանազան խօստիկներ և զանազան ձկնեղէններ և ալլն: Ինչ էք կարծում, չինի գուք համոզուած էք թէ այս պարզեներ տւողը ձեր ազգականն է և արիւնակից բարեկամը, որը ձեզ համար այսպէս յաջորդութեամբ պատրաստում է:-Ո՛չ, գուք համոզուած պէտքէ լինէք, որ աշխարհի բոլոր բարիքը բոլոր արարածների վերալ բաժանուած է և ոչ թէ միայն ձեր վերալ, ժիր և ձեռնհաս մարդը շուտով

Ե ձեռք բերում և վայելում, իսկ թմրած և
դանդաղը մնում է զրկուած ամեն բարիքներից:
Սակայն գտնուում են աշխարհիս մէջ և այսպիսի
մարդիկ, որոնք գիտութեամբ և դիտմամբ զրկում
են իրանց այն բարիքները վայելելուց, և հազար
անգամ ձեռնհաս են, այլ բռնի և զանազան խաբե-
բայ պարագաներով են ձեռք բերում: Զեզ ճշմարի-
տըն եմ ասում, որ շատ ծանր և գժուարին է վճռել
թէ արդեօք ինչ օգուտ պիտի ունենայ այն անձը,
որ վճռել է իւր կեանքը անցուցանել անմարդա-
բնակ մի քարաժայու ալրի մէջ, և այն անձը, որ
ձեռնհաս չէ իւր աշխատութեամբ օրական պարէն
հայթալթելու, այլ նա զանազան խաբեբայ ճա-
նապարհներով է իւր հացը գտնում: Կան այնպի-
սիները, որոնք չեն աշխատում, պատրաստ ունեն
ամեն ինչ, բայց երբէք մտքերից չեն անցկաց-
նում աշխարհի մէջ գտնուած բիւրաւոր կարօ-
տեալներին, որոնցից շատերը գուցէ հազար անգամ
թէ խելքով և թէ բնաւորութեամբ իւրեանցից
ազնիւ են, բայց թշուառ են և զուրկ կենսական
պիտոլքներից: Այս հարցի վճռին, թէ ինչու

մէկն ուտում է և միւսը զրկուում է, կըմնալ
նախախնամութեան երկայնամիտ կարգադրու-
թեանը. միայն մենք մեր կեանքի մէջ տեսնում
ենք, որ շատ անգամ փարթամ և հարուստ մար-
դիկ ինչպէս առաջ են գնացած, նոյնպէս սկսում
են յետ երթալ. շատ անգամ երեկուան կարօ-
տեալները, որ թշուառութեանց ձեռքին խաղալիք
էին, այսօր երջանկութեան և յաջողութեան մէջ
են: Եթէ այսպէս է, ուրեմն ոչ ոք իրաւունք
չունի իւր ունեցածի վերայ վստահանալ. թող ոչ
աղքատը տիրի, ոչ հարուստը ուրախանայ: Այս
իսկ պատճառաւ, սիրելի զաւակներս, ես ձեզ
աւանդում եմ իմ հայրական պատուէրս. — Առաջին՝
դուք պէտք է բոլորովին հեռու մնաք չուալլութեան
և զեխութեան տանող կեանքից, այդպիսիների
կեանքը կըլինի կարճակեաց, իսկ եթէ երկարակեաց
էլ լինի, կըլինի թշուառ և աղքատ:

«Երկրորդ՝ պատուիրում եմ ատել ի բոլոր
սրտէ ծուլութիւն և պարապութիւնը այնպէս,
ինչպէս որ պիտի ատէիք այն անձնաւորութեանը,
որը ոչ թէ միայն ձեռքից ունեցած օրական հացը

Խլում է, այլ և սուրբ հանած ձեռին պատրաստ-
ւում է ձեզ սպանել: Երրորդ՝ աշխատեցէք միշտ
սակաւապէտ լինել, որովհետև աւելացածը միշտ
ձերն է, եթէ ձեզ էլ չմնալ, կը մնալ ձեր ընկերին,
իսկ ընկերին մնալով՝ հաւատացնում եմ ձեզ, որ
գուշ ոչ մի կորուստ չէք ունենալ»:

Օսինը վերջացրեց իւր խօսքերը և ընտանեկան
սեղանից վեր կացաւ, պատուիրելով իւրաքան-
չիւրին գնալ հանգստանալ և առաւօտը վաղ
զարթնելու ամեն մէկը իւրեան ստանձնած գործին
երթալ...

Օսինը շատ ցաւեց, երբ մի օր լսեց, որ իւր
եղբայր Մօսինը գիւղից անյալտացել է. նա մտադիր
էր մի քանի ժամանակ եղբօրը իբրև դաս թողնել
առանց ուշադրութեան և ապա մասնակից անել
նորան իւր մեծ կարողութեանը, բայց եղբայրը
գործը այդ վախճանին չհասցրեց:

Մօսինը վատնելով իւր ունեցածը և ձան-
ձրացած լինելով իւր ընտանեկան շարունակ ան-
բաւականութիւններից և անընդհատ կոխւներից,
մի գեշեր գլուխը առաւ կորաւ: Կինը վաղուց

արդէն մեռել էր, միակ թշուառ արարածը, որ
մնացել էր նորա անչափահաս աղջիկն էր, որ
Օսինը եղբօր կորչելու երկրորդ առաւօտը առաւ
իւր ընտանեկան շրջանի մէջ, գգուեց, փայփայեց
և խնամեց իւր սեփական զաւակների նման:

Մելիք-Վիրապի վերջին պատուէրը սրբու-
թեամբ կտուարուեց: Բոլոր գիւղացիք Օսինի
յատուկ խնդրանօք նորան անուանեցին Մելիք-Վի-
րապ, իսկ տան կոչումը միշտ մնաց Մելիք-Վի-
րապենց լիքն օջաղ:

Օսին իւր եղբօր Մօսինի անյայտանալուց յետոյ
գեռ երկար միջոց Ծաթեր գիւղում ապրեց, ամուս-
նացրեց իւր եղբօր Մօսինի աղջկան, Վարդուհուն,
մի առողջ, աշխատասէր պատանոյ հետ, կար-
գաւորեց նրանց գեղջկական բոլոր հարկաւորեալ
պիտուքները, թողեց նորանց բնակութեան համար
Մելիք-Վիրապի մնացեալ մի հին տուն, իսկ
ինքը իւր ամբողջ գերգաստանն առած գուրս եկաւ
Ծաթեր գիւղից, գնաց գէպի Սիւնեաց երկիրը:

Ա Յ Թ Զ

կառաջ ճայալու պատշեման վրձ յա անձաւու
յու ազ օքքրու ուժափացնու ուղաշահի յանու
առա յառաւան բարեց ասէցար պար ունի
սպազութ ընառք շին հետաշ աստվածու ու
մասն պատմաւաց անխփառու յու յանու ա
չառ ցուդասոր մէզզմի պար Բագալի
յան ածառ քր պար ուժափացնու ունու
անձաւու մէջմանու մարտ պատահածու ու
ան ցին պատմաւացն ունչ ունչ առ
ունչ ունչ ունչ ունչ ունչ ունչ ունչ
ունչ ունչ ունչ ունչ ունչ ունչ ունչ ունչ

876.8



ՀՀ Ազգային գրադարան



NL0153177

